

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ ՅԵՎ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

# ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ-ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

(Նյութեր կենսագրության համար)

А II  
2963

24/11/70  
11/11/70  
1625

10/11/70	11/11/70	1625

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ ՅԵՎ Դ. ՍԻՄՈՆՅԱՆ

3K71.092 [Մյուս հիշյալ]

4-

# Ա.Լ. ՄԱՐՏՈՒՆԻ-ՄՅԱ ԿԻԿՅԱՆ

(Նյութեր կենսագրության համար)

A 29639




Հ.Ս.Խ.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 304

ԴՈՍԿՎԱ

1925



1 THE UNIVERSITY OF CHICAGO LIBRARY


UNIVERSITY OF CHICAGO LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO LIBRARY

(The University of Chicago Library)

UNIVERSITY OF CHICAGO LIBRARY

UNIVERSITY OF CHICAGO LIBRARY






Ա. ՄՅԱՄՆԻԿՅԱՆ

(ուսանող)

Գործ՝ Մ. Սարյանի.



STATIONER'S MARK

(mirrored)

STATIONER'S MARK

# ՄԱՐՏՈՒՆԻ-ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

1906 — 1920.

Ալեքսանդր Մյասնիկյանին յես ճանաչում յես ուսանողական շրջանից—գրեթե պատանեկական տարիներից:

Այդ տարիների ընկերական կապը սովորաբար առանձին ույժով մնում է հոգու խորքում և յեղբայրական մտերմության գույն է ապիս ընկերական բարձր զգացումին:

Իրա համար ել գժվար է լինել «անաչառ», կարվել անցյալի սուր հուշերից, մոռանալ անցած սրերը և լինել լոկ փաստերի արձանագրողի դերում հեռացած ընկերոջ դերեզմանի մոտ: Իրա համար ել կուզեյի սկսել հենց այդ ուսանողական շրջանի մի քանի եջերից և միաժամակ ուրվագծել հրապարակախոս և գրականագետ Մարտունու դերը մեր կյանքում:

## I.

1906—1907 թվականն էր:

Առաջին առևտան հեղափոխությունը արգեն ջախջախված էր:

Հսկա ուռևական միապետության ծանր մուրճը հարված հարվածի հետեվից հասցնում էր պարտված ժողովրդին, ցրում և ջլատում կուխոնների գունդերը ու խոր հիասթափությունն առաջ բերում հեղափոխական շարքերում: Թվում էր հաճախ, վոր այլևիս ապարդյուն է ամեն մի ջանք և անհնարին նոր հեղափոխության վերադարձը:

Սակայն հեղափոխութեան թարմ գովը դեռ չեր անցել: Զգում եյինք և մենք, յերիտասարդ ուսանողներս, վոր ժողովրդական Ռուսիայի խորքերում, մեծ յերկրի լայնատարած գյուղերում և գործարաններում չի հանգել տակավին կրակը: Մերթ ընդ մերթ բռնկում եյին այս կամ այն հեռավոր վայրերում նոր ապստամբութիւններ և լավում եյին տարրերային մըրկի հեռավոր արձագանքները: Բոլոր այդ անկազմակերպ ցույցերը ճնշվում եյին անմիջապէս: Բայց և այնպէս նրանք նոր եռանդ եյին ներշնչում հեղափոխականներին և առանձին տոկունութիւն մտցնում գործող հեղափոխականների շարքերի մեջ:

Յեվ անա հենց այդ շրջանումն էլ Բագու ե գալիս Ալեքսան Մյասնիկյանը: Մոսկվայի համալսարանի իրավաբանական մասնաճյուղի ուսանող եր նա: Շատ լավ եր ծանոթ դեռ այդ ժամանակ և հայ և ռուս գրականութեան հետ: Գիտեր խոսել պարզ և տրամաբանորէն: Յեվ անփոխարինելի դասախոս եր թե բանվորական և թե ուսանողական հավաքութիւնների մեջ:

Բագուն, նավթային և բանվորական այդ յեռուն քաղաքը 1906—97-ին ներկայացնում եր իրենից հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների հակամարտութեան և բաղխումների խիստ տենդոտ միջավայր:

Բանվորական շրջանում—ուժեղ եյին մեծամասնականները:

Բայց մեր կողքին, կամ ավելի ճիշտ մեր հանդեպ կանգնած եյին մի շարք ուրիշ խմբակցութիւններ:

Դրանցից «փոքրամասնականները» աշխատում եյին չափավորել պրոլետարիատի շարժումը և սահմանավորել նրա դասակարգային պայքարը «տնտեսական» կռիւի նեղ շրջանակներով:

Փոքրամասնական սոցիալ-դեմոկրատներից վոչ պակաս չափով վտանգավոր եյին «եսերական» (նարողնիկական) խմբակները, վորոնք հենվելով Բագվա բանվորութեան ավելի հետամնաց տարրերի վրա, ձգտում եյին

խաբել արթնացող պրոլետարներին քաղքենիական միամիտ ցնորքներով:

Դրանց կողքին եյին կանգնած ազգայնական կուսակցությունները, հայ դաշնակցականներն և հրեա սիոնականները: Ռուսական «եսեր»-ներն և նացիոնալիստները գործում եյին սովորաբար միացյալ և ընդհանուր շարքերով ու միշտ աշխատում եյին ամբողջ իրենց գործելակերպը հիմնավորել տեսական վորոշ փաստաբանությամբ:

Յերկու հիմնական խնդիրների շուրջն էր պտտում պայքարը:

Առաջինը՝ գյուղացիական կամ ագրարային հարցն էր, իսկ յերկրորդը՝ ազգային պրոբլեմը:

Յերկու հարցերի քննության ժամանակ ել «եսերներն» և ազգայնականները կրկնում եյին հաճախ գերմանական և ռուսական ընկիզիոնիստների առարկությունները «մանր տնտեսության» արժեքի, «խոշոր տնտեսության» թուլության, «գյուղացու և պրոլետարի» տնտեսական շահերի միորինակության մասին: Մարքսիզմի վերաքննությանը՝ նվիրված քննադատական գրականությունը այդ ժամանակ բավական մեծ էր: Յեվ դրա համար ել բոլոր վեճերի և բաղխումների ժամանակ բավական մեծ տեղ եյին գրավում վիճակագրական տվյալները և բազմազան ցիտատները բուրժուական գիտության հայտնի ներկայացուցիչների ուսումնասիրություններին:

Յեվ մարքսիստ - գործիչը պարտավոր էր ծանոթանալ այդ բոլորի հետ: Հակառակորդներին պատասխանելու համար հարկավոր էր ծանոթ լինել հակառակորդ բանակի բոլոր մարտկոցների և պահեստի հետ: Վոչ պակաս տեղ էր գրավում այդ մարտկոցների մեջ և «ազգային» խնդիրը:

Դա ել ազգայնականների սիրեցյալ զենքն էր: Շեշտելով «ազգային» շահերի կարեւոր դերը կովկասյան նացիոնալիստներն աշխատում եյին վարագուրել դասակարգային մոմենտը ազգային-բոմանտիքական վորոշ վարա-

գույրով և բացասել հասարակական որգանիզմի դասակարգային շերտավորման նշանակութունը:

Ապա յելնելով այդ հիմնակետից նրանք պահանջ եյին դնում ույժ տալ «ազգային շարժմանը» և ազգային հեղափոխական կազմակերպութիւններին: Նացիոնալիստների «տեսաբանութեան» համաձայն Բազմա պրոլետարիատի դասակարգային կազմակերպութիւնը պետք է տեղի տար ուս եսերների և կովկասյան ազգայնականների առաջ: Պրոլետարիատը պետք է բաժանվեր զանազան «ազգային» հատվածների և պաշտպաներ իր շահերը համապատասխան «ազգային-հեղափոխական» կազմակերպութիւնների միջոցով: Իսկ միապետութեան փլատակների վրա յել պետք է հաստատվեր դաշնակցական բուրժուառամկավարական հանրապետութիւնը:

Յես դիտավորութեամբ կանգնում եմ միայն ընդհանուր կետերի վրա, վորովհետև հենց այդ ընդհանուր կետերի շուրջն էլ պտտում եր սովորաբար կուսակցութիւնների հիմնական բանավեճը:

Մեր հակառակորդների այդ «տեսաբանութեանը» պետք է հակադրվեր մարքսիստական ուսմունքը իր ամուր և անպարտ կառուցվածքով:

Յեվ ահա հենց այդտեղ է հանդես գալիս ուսանող Ալյոշան իր գիտական պաշարով և աննկուն յեռանդով:

Տարորինակ կերպով նա ժամանակ եր գտնում համալսարանական պարապմունքների հետ միասին հասարակական-տնտեսական խնդիրների մանրակրկիտ ուսումնասիրութեան և կուսակցական-պրոպագանդիստական գործունեյութեան համար: Յեվ միաժամանակ կարողանում եր բուրժուական գիտութեան արսենալից վերցրած փաստերով և թվերով խարազանել բուրժուական իմաստասիրութեան ամենանուրբ տեսութիւնները:

Կուսակցական վեճերը կազմակերպվում եյին սովորաբար գործարանային շրջանում, Բալախանի, Բիրի-եյբատ, Բամանիի հանքերում—բանվորական մեծ կազարմա-

ներում: Հաճախորդների թիվը հասնում էր 20-ից մինչև 200—300: Տեղ-տեղ հայ դաշնակցականները դիմում էին դեմագոգիական միջոցների և ամեն անգամ, յերբ նախագգում էին իրենց պարտութունը—ժողովը քանդելու նպատակով ստեղծում էին վորևե իրարանցում:

Մյասնիկյանը գործում էր միաժամանակ և հայ և ռուս բանվորների շրջանում: Յեվ ամեն տեղ հավասար չափով վտանգավոր ախոյան էր մեր հակառակորդների համար: Թվերին նա հակադրում էր թվեր, ցիտատներին—ցիտատներ: Խոսում և վիճում էր նա միշտ անդորր ու հանդարտ վոճով, կիսաիրոնիական ժպիտը շրթունքին—և դրանով արդեն զայրացնում էր անույժ հակառակորդներին:

Մեծ էր նրա հմայքը և ռուսանողական շրջաններում:

Բազմի ս-դ. կազմակերպութունը առանձին ուշադրութուն էր դարձնում յերիտասարդության քաղաքական դաստիարակության վրա, վորովհետև հենց այդ ռուսանողության միջից էր դուրս հանվում կուսակցության ագիտատորներին, պրոպագանդիստներին և տեխնիկների բավական ստվար այն գունդը, վոր այնքան կարեվոր դեր էր կատարում կուսակցական սեվ աշխատանքի ժամանակ:

Ռուսանողության համար կազմակերպվում էին առանձին ժողովներ և դիսկուսսիաներ, ուր քննության էին յենթարկվում տեսական ավելի բարդ հարցերը: Առանձնապես մեծ տեղ էր բռնում այդ հարցերի մեջ «դիալեկտիկական մատերիալիզմը»: Յեվ դարձյալ, այդ ռուսանողական ժողովներում ել Ալյոշան մեկն էր ամենասիրված դասախոսներից: Հիշում եմ, վոր այդտեղ ել սկսել է նա իր մի շարք այն դասախոսութունները «հողային հարցի» և «ազգային պրոբլեմի» մասին, վոր հետագայում լույս է ընծայել առանձին հրատարակությամբ վերամշակված ձեվով:

Յերկրորդ անգամ Մյասնիկյանը Բագու յե գալիս 1908-ին:

Այդ շրջանում մեր կուսակցութիւնը գաղտնի անլեզու աշխատանքի հետ միաժամանակ վարում էր նաև վորոշ լեզու պրոպագանդ բանվորական - ժողովրդական ակումբներում: Բազմա կազմակերպութեան հավանութեամբ Ստեփան Շահումյանը ընդունել էր Բազմա նավթարդյունաբերական բայոնի «ժողովրդական տների» կառավարչի պաշտոնը:

Դա չափազանց կարեւոր գործ էր, քանի վոր ժողովրդական տների և ակումբների ցանցը տարածվում էր նավթարդյունաբերական շրջանի մեկ ծայրից մինչև մյուսը — Բալախանուց մինչև Բիրի-էյբատ: Դասախոսներին նշանակում էր Ստ. Շահումյանը: Ինչ խոսք վոր «լեզու» այդ «հնարավորութիւնը» ոգտագործվում էր առաջին հերթին «գիտական սոցիալիզմի» պրոպագանդի համար: Վորքան հիշում եմ դասախոսութիւնների թեմաներն էլ մշակվում էին վաղորոք Ստ. Շահումյանի գրասենյակում: Ահա այդ թեմաներից մի քանիսը՝ «Արհեստակցական շարժում և արհեստակցական միութիւններ», «Բանվորական որենադրութիւնը Ռուսիայում», «Ութ ժամվա բանվորական որ», «Ի՞նչ է հասարակական դասակարգը», «Սոցոր և մանր տնտեսութիւնը գյուղական տնտեսութեան մեջ» և այլն: Ա. Մարտունու շոշափած թեմաները վերաբերվում էին տնտեսագիտութեանը: Բացի «արհեստակցական շարժման», «ութ ժամյա բանվորական» որին նվիրված դասախոսութիւններից նա կարդացել է վորքան հիշում եմ, առանձին դասախոսութիւններ «կոոպերացիայի» և «արժեքի թեորիայի» մասին:

Ինչպես միշտ նա կարդում էր և ուսերեն և հայերեն ու վայելում էր մեծ ժողովրդականութիւնը բոլոր շրջաններում: Ահա հենց այդ դասախոսութիւնների ընթացքում էլ նա վերջնական հղկման է յենթարկում իր հետաքրքրական հոգվածաշարքը «ազգային հարցի» մասին:

Այստեղ տեղին կլինէր հիշել, վոր մոտավորապես 1909

-ից սկսած մեզ մոտ ել առաջ ե գալիս վորոշակի ձևակերպված յուրորինակ բունդիստական հոսանք: Բազմաբայոնում գործող «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայկազմակերպությունը» իր գործունեյության նախնական շրջանում կանգնած եր մեծամասնական պլատֆորմի վրա և բացասական վերաբերմունք ուներ «Բունդ» հրեական կազմակերպության ազգային ծրագրի նկատմամբ: «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունից» նա տարբերվում եր իր դավանած ազգային կազմակերպչական սխառեմով: Ս. Գ. Բ. Հայ կազմակերպությունը կանգնած եր այն տեսակետի վրա, վոր հայ բանվորական մասսաները պետք ե կազմակերպվեն առանձին «ազգային» կազմակերպությունների մեջ: Այդ հայեցակետի համաձայն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը պիտի դառնար տարբեր «ազգային» կազմակերպություններ: Չափահասական միություն: Ավելորդ կլիներ կրկնել այստեղ վոր «ազգային կազմակերպչական սխառեմը» սխալ լինելով հանդերձ մեծապես հարվածում եր պրոլետարիատի միջազգայնացման գործին:

1908-09-ից սկսած հայ կազմակերպության մեջ, այնքան ուժեղանում ե նացիոնալիստական թեվը, վոր արդեն տիրական դեր ե գրավում վողջ կազմակերպության մեջ: Նացիոնալիստական նոր հավատամքի հիմնավորման համար մեջտեղ ե հանվում Բունդի «ազգային կուլտուրական» ավտոնոմիան, վորի տեսական ուրույն փաստաբանությունը հետագայում առաջադրվում ե Գ. Անանունի հողվածների մեջ:

Յեվ ահա, Ալ. Մարտունին, վոր գործում եր միաժամանակ և Ռուսաստանի ս-դ. կուսակցության և հայ կազմակերպության մեջ, մեկն ե լինում նրանցից, վոր դուրս ե գալիս ազգային-կուլտուրական ավտոնոմիայի դեմ և առանձին հողվածների մեջ կտրական քննադատության ե յենթարկում «ազգային-կուլտուրական» ավտոնո-

միայնի պահանջը: Նույնն է անուամբ նա նաև իր պարբերական դասախոսութիւններէ մեջ, վոր կարգում է բանավորական ժողովներում: Ա. Մարտունու այդ ուսումնասիրութիւնը գրված է խիստ պարզ և գյուրամատչելի լեզվով և իր վորոշ մասերում այժմ ել շի կորցրել իր արժեքը:

Յերկրորդ հիմնական խնդիրը, վոր վիճարանության և գաղափարական բաղխումքներէ առանցքն էր կազմում— գյուղացիական պրոբլեմն էր:

Եսերներն և դաշնակցականները «հողային» հարցի մասին ստեղծել էին վորոշ հրապարակախոսական գրականութիւն: Յեվ այդ քաղքենիական «սոցիալիզմի» քրննադատության ել նվիրում է Մարտունին իր տեսական մի շարք հողվածները հողային հարցի մասին: Առանձին քննության է յենթարկում նա ամենից առաջ «հասարակական դասակարգերի» պրոբլեմը: Մի խնդիր էր դա, վոր միշտ առանձին ուժով էր շեշտվում, քանի վոր ռուսական եսերներն աշխատում էին առաձգական իմաստ մըտցնել «դասակարգ» տերմինի մեջ, և «բանվորին», «գյուղացուն», «աշխատավոր մտավորականին» ձուլել մի ընդհանուր խառնարանի՝ «աշխատավոր ժողովրդի» մեջ: Հայ դաշնակցականներին, վորոնք թարգմանել էին հայերեն վ. Չերնովի հայտնի գիրքը («Գյուղացին և բանվորը, վորպես տնտեսական կատեգորիաներ») միացել էր նաև «Յերթտասարդ դաշնակցականներէ» հայտնի պարագլուխը, Լ. Աթաբեկյանը, վորն առանձին հողված էր նվիրել դասակարգային շահերի տնտեսական վերլուծութիւնը:

Մարտունին մանրամասն քննության է յենթարկում հենց այդ խնդիրը և կանգնելով «հասարակական դասակարգերի» մասին ստեղծված գրականութիւն վրա տալիս է մարքսիզմի հիմնական սկզբունքներից բղխող հատակ և տրամաբանական բնորոշում: Միաժամանակ նա կանգնում է «գյուղացու» և «բանվորի» փոխհարաբերութիւնների վրա ու ցուցադրում է նարողնիկական տեսութիւնը:

ների կատարյալ թուլութիւնը: Ի միջի այլոց նա չի վա-  
րանում քննադատութեան յենթարկել կառուցկու հայտնի  
ուսումնասիրութիւնը «Դասակարգային շահերի» մասին,  
և այդ շնայած նույնիսկ նրան, վոր կառուցկին հոկտեմ-  
բերյան հեղափոխութիւնից առաջ համարվում եր միան-  
գամայն անսխալական ավտորիտետ: Յեթե մենք նկատի  
առնենք մարքսիստական տեսական գրականութեան աղ-  
քատութեանը հիշյալ շրջանում, մասնավորապես այն, վոր  
«դասակարգերի» եութեան մասին ստեղծված գրականու-  
թիւնը խիստ աննշան լինելով հանդերձ լեցուն եր հակա-  
սութիւններով—կտեսնենք, վոր Մարտունու հողվածը այդ  
Ֆոնի վրա գրավում ե կատարելապես ինքնուրույն դիրք  
և բնորոշվում ե իր տրամաբանական կառուցվածքով և  
փաստաբանութեամբ: («Հասարակական դասակարգի մա-  
սին».—«Նոր կյանք». Բագու. 1911, № 1—2., 1912.  
№ 3—4.) Պետք չե մոռանալ, վոր տեսական վողջ գրա-  
կանութիւնը «դասակարգերի» մասին այդ շրջանում փաս-  
տորեն սահմանափակվում եր Տուգան-Բարանովսկու («Ի՞նչ  
ե հասարակական դասակարգը»), Ֆինն-Յենոտայեվսկու և  
Պլեխանովի ցրիվ դիտողութիւններով և ակնարկներով:  
Մնացյալ գրականութիւնը շատ չնչին եր, և դրա համար  
ել ամեն վոք յուրատեսակ ձեվով եր պարզաբանում  
Մարքսի «Կապիտալի» III-րդ հատորի հայտնի կտորը դա-  
սակարգերի մասին:

Ահա ինչու հիշյալ տեսութիւնների մեջ Ալ. Մար-  
տունու հողվածաշարքը գրավում ե իր առանձին տեղը:

Այդպես ե նաև նրա մյուս հողվածը—ազրարային  
հարցի մասին:

Դաշնակցութիւնը մեզ մոտ, ինչպես հայտնի յե ամե-  
նից շատ ոգտագործել ե ռուս եսերների տեսութիւննե-  
րը ազրարային խնդրի մասին, թեյեվ իրենք դաշնակցա-  
կան տեսաբաններն իրենց կոնկրետ ուսումնասիրութիւն-  
ների մեջ շատ հաճախ շեղվել են եսերական ուղիից:  
Դրա համար ել Մարտունին մի-առ-մի կանգնում ե

եսերների տեսական հայացքների վրա և դյուրըմբռնելի կերպով ցուցադրում այդ հայացքների միակողմանիությունը: (Տես՝ «Արդի տնտեսական կյանքը»՝ ա) Կապիտալիզմը Ռուսաստանում. բ) Ռուսական համայնքը. գ) Խոշոր և մանր տնտեսութեան հարցը գյուղատնտեսութեան մեջ. «Մեր ուղին». Ժողովածու. Բագու. 1912.) Թե այդ, և թե վերոհիշյալ հողվածների մասնավոր արժեքը նրանումն է, վոր պարզում է ուսանող Մարտունու դեմքը: Վերը շեշտվեց արդեն այն, վոր դեռ 1906—08 թվականներին նա ամենից շատ հետաքրքրվել է ազգային և հողային խնդիրների լուսաբանութեամբ: Վորքան ինձ հայտնի յե, այդ տարիներին ել նա կազմել է իր հետագա ուսումնասիրությունների հիմնական կմաղքը:

\* \* \*

Տարորինակ կերպով իր հենց այդ հատկություններով Մարտունին բնորոշում է մեր կյանքի նոր գծերից ամենահիմնականը:

Մտավորականներ մենք շատ յենք ունեցել և անցյալում:

Ստ. Նազարյանց, Պատկանյան, Բաֆֆի, Արծրունի, Քրիստափոր Միքաելյան—մի մեծ շղթա յե դա, վոր բնորոշվում է ամենից առաջ իր ազգայնական աշխարհայեցողութեամբ:

90-ական թվականների վերջին շրջանից հանդես յեն գալիս մեզ մոտ նոր դեմքեր, Բոգդան Գնունյան, Սուրեն Սպանդարյան, Արշակ Զոհրաբյան, Ալեքսանդր Ռուբենի, Ստեփան Շահումյան և Արսեն Ամիրյան:

Այդ նոր մտավորականությունը արտահայտում է տակավին թույլ և անկազմակերպ կովկասյան պրոլետարիատի ձգտումները: Կուլի և անդուլ պայքարի դրոշ է պարզում նա: Անողոք քննադատութեան է յենթարկում հին արժեքները և մեր խավար, ազգայնական թույնով

լեցուն տաղտուկ իրականութեան մեջ հնչեցնում ե միջ-  
ազգայնութեան և սոցիալիզմի քարոզը:

Մարտունին մեկն ե այդ յերկաթե շղթայի ողակներ-  
րից, այն տարբերութեամբ միայն, վոր նա իր գոր-  
ծունեութիւնը և հրապարակախոսութիւնը ամենասերտ  
կերպով կապում ե կոնկրետ կյանքի տեսական վերլու-  
ծութեան հետ:

Այն, ինչ վոր չեն կարողացել կատարել պրակտիկա-  
կան քաղաքական գործով ծանրաբեռնված մեր առաջին  
ուսուցիչները լրացրել ե Մարտունին իր ինքնուրույն հող-  
վածներով և տեսութիւններով: Այն, ինչ վոր ընդհանուր  
կերպով և կարմիր գծերով նկարել են Սպանդարյանը և  
Շահումյանը—մարքսիզմի այդ յերկու «անհաշտ» հրա-  
պարակախոսները—Մարտունին հիմնավորել ե ավելի կոն-  
կրետ փաստերով և հայ կոնկրետ միջավայրից վերցրած  
որինականերով:

Ահա ինչու «միջազգայնական» Մարտունին մեկը լի-  
նելով ընդհանուր համամիութենական գործիչներից հան-  
դիսանում ե միաժամանակ նայել հայ հասարակական  
մտքի նորագույն փուլը բնորոշող ամենացայտուն դեմքը:

Ավելի յեվս վորոշ պարզվում ե այդ, յերբ քննում  
յենք Մյասնիկյանի գրաքննադատական հողվածները:

## II

Մեր քննադատութեան պատմութիւնը այնքան ել  
հին չե: Սկսվում ե նա իրապես «Վերածնութեան» պատ-  
մաշրջանից:

60—70-ական թվականների ամենափայլուն ներկա-  
յացուցիչը անշուշտ Միք. Նալբանդյանն եր: Նրան կարե-  
լի յե համարել հայ լիբերալ քննադատութեան նախահայր:  
Փայլուն այդ հրապարակախոսի գործերում աչքի եր զար-  
նում այն, վոր քննադատը հաճախ վոչ այնքան գրական  
յերկասիրութեան վերլուծութիւն եր տալիս, վորքան իր  
սեփական հասարակական-քաղաքացիական խոհերի արծար-

ծումը և փաստաբանութիւնը: Գեռ ավելին ևս: Միա-  
ժամանակ հրապարակախոսական քննադատութեան հետ Նալ-  
բանդյանը յերկար տողեր եր նվիրում նաև նյութի հետ  
կապ չունեցող խնդիրների արծարծմանը:

Մեր հետազոտ քննադատները գրեթե բոլորն ել ընթա-  
նում են այդ ուղիով մի փոքրիկ, բայց կարևոր տարբե-  
րութեամբ: Նալբանդյանը այսպես թե այնպես խտացած  
կերպով արտացոլում եր հայ ինտելիգենցիայի պատմու-  
թեան «Մըրկի ու պայքարի» եպոխտայի վոզին: Հետազո-  
տներ քննադատութիւնը զուրկ եր այդ «մըրկային» շեշ-  
տից: «Հրապարակախոսական» լինելով հանդերձ նա չա-  
փազանց անզույն և տաղտուկ եր, վորովհետև արտահայ-  
տում եր հայ «համեստ», «չափավոր» և խիստ սահմանա-  
փակ բուրժուայի խոհերը:

Յես չեմ տալիս այստեղ անուններ, չեմ բերում որի-  
նակներ: Անցյալի նացիոնալիստ այդ քննադատները հայտ-  
նի յեն բոլորին: Բավական ե միայն հիշել այստեղ Լեոնի,  
Լեվոն Մանվելյանի, Վ. Փափազյանի և նման գործիչների  
յերկերը:

Բոլոր այդ հեղինակները մոտեցել են քննութեան  
նյութին զինված մութ «ազգային» ակնոցներով, քննել են  
վողջ հայ գրականութիւնը վորպես հայ «ապադասակար-  
գային» մտավորականութեան ստեղծագործութիւն և բա-  
վականացել են ընդհանուր դիտողութիւններով գրագետի  
«կյանքի» կամ «լեզվի» ու «վոճի» մասին:

Գրական քննադատների յերկրորդ խումբը, վոր առաջ  
ե յեկել ավելի ուշ, և ցուցադրվել ե գլխավորապես Նիկ.  
Աղբալյանի և Յուլակ Խանգաղյանի գործերում, յերկու  
քայլ առաջ եր գնում և ներկայացնում եր իրենից «մա-  
քուր» քննադատութեան հայկական նմուշը: Վորոշ չափով  
այդ հոսանքը կրկնում ե ռուսական ժամանակակից  
ձեվական (Ֆորմալ) դպրոցի տեսութիւնը: Ասում ենք  
վորոշ չափով, վորովհետև հայ վերոհիշյալ քննադատներից  
վոշ վոք չի կարողացել հիմնավորել իր տեսական սկզբուն-

քները և չի կիրառել բոլոր մանրամասնություններով «ձե-  
վական» դպրոցի առաջադրած հիմնական կանոնները: Բայց  
և այնպես, եականում և հիմնականում Նիկ. Աղբալյանը և  
Ցուլակ Սանգադյանը գնացել են միեմբուլյն ուղիով:


Յերկուսն ել քննել են գեղագետին կտրված հասարա-  
կական միջավայրից, յերկուսն ել վերլուծել են գեղագե-  
տի ստեղծագործությունը, վորպես ինքամփոփ և ինքնա-  
պարփակ մեծություն և իրենց գլխավոր ուշադրությունը  
դարձրել են գեղարվեստական-գրական յերկասիրության  
կառուցվածքի, արտաքին ձևվի, ոճի և լեզվի, թեմայի  
գեղարվեստական արտահայտության քննության վրա:

Հակառակ այդ յերկու ուղղություններին մարքսիզմը  
մեր կյանքում առաջինն է լինում, վոր գեղագետին ա-  
մուր կերպով կանգնեցնում է կոնկրետ հողի վրա և սո-  
ցիալական միջավայրի վերլուծությունը լուսաբանում է  
նաև գրականության բովանդակությունը: Սակայն պետք է  
շեշտել նաև այն, վոր մեզ մոտ մարքսիզմը յերկար ժա-  
մանակ շնորհիվ հնչակյան տեսաբանների (Ռ. Սանգատ,  
Նազարբեկ) և «իշխանյանականների» (Բախշի Իշխանյան,  
Դ. Անանուն) յենթարկվել եր անորինակ խեղաթյուրման  
և գուեհկացման:

Վողջ խնդիրը հենց նրանումն է, վոր հիշյալ ազգային  
«մարքսիստները» ուսա առաջին լեզալ մարքսիստների  
նման պրոլետարիատի գիտական ուսմունքը քննել են,  
վորպես «տնտեսական մատերիալիզմի» ուսմունք: Դեռ  
ավելին յեվս: Հաճախ դրանք անմիջական կապ են հաստա-  
տել «տնտեսական» հիմնաշենքի և գրական ստեղծագոր-  
ծության միջեվ և խորապես համոզված են յեղել նրանում,  
վոր հենց դրանումն էլ կայանում է «գիալեքտիկական մա-  
տերիալիզմի» տեսությունը:

Այդպես է մոտեցել հարցին մասնավորապես Դ. Անա-  
նունը իր յերկու գրաքննական ուսումնասիրությունների  
մեջ (Հովհաննես Թումանյանի և Վահան Տերյանի մասին):  
Նույնն է արել և Բախշի Իշխանյանը իր յերկու գրքերի

A 29639



մեջ («Հասարակական գաղափարները Շահագիզի և Պատկան-  
յանի յերկերում»), «Աշխատանքի մոտիվները Ադա Նեգրիի,  
Շուշանիկ Կուրդինյանի և Հակոբ Հակոբյանի բանաստեղ-  
ծությունների մեջ»): Յեվ ահա մեզ մոտ, Ալեքսանդր Մար-  
տունին մեկն է լինում հետեվողական մարքսիզմի այն  
տեսաբաններից, վորոնք կարողանում են կիրառել մար-  
քսիզմի հեղափոխական մեթոդը հայ կոնկրետ իրականու-  
թյան մեջ և միաժամանակ դրա հետ լուսաբանել գրակա-  
նության հասարակական դերն և արժեքը:

Նրա առաջին գրական-քննադատական յերկասիրու-  
թյունը այդպիսի մի փորձ է: Վերնագրի մեջ էլ շեշտված  
է հեղինակի այդ բնորոշ մոտեցումը: Ա. Մարտունուն  
հետաքրքրում է վոչ թե Յովհաննիսյանի և Ալ. Ծատուր-  
յանի «գեղարվեստական» տաղանդը, այլ նրանց «հասա-  
րակական» արժեքը: Ընդգծելով այդ կետը Ա. Մարտու-  
նին միաժամանակ խուսափում է գուեհիկ մարքսիզմին  
հատուկ պրիմիտիվիզմից և մանրակրկիտ կերպով քննու-  
թյան է յենթարկում հայ յերկու բանաստեղծների իսկա-  
կան գործերը: Ապա բերելով մի շարք խիստ հատկանշա-  
կան որինակներ և կտորներ Հովհաննիսյանի և Ծատուր-  
յանի գործերից, նա մերկացնում է հայ հեղինակների ըս-  
տեղծագործության սոցիալական աստառը և տալիս է յեր-  
կու բանաստեղծների բնույթագիծը հայ իրականության  
կոնկրետ ֆոնի վրա: Հետաքրքրական է ի միջի այլոց այն,  
վոր միևնույն այդ ուսումնասիրության մեջ Մարտունին  
մոտենում է նաև հայ ռազմական նացիոնալիզմի լուսաբա-  
նության: Դրա ծագումը նա կապում է հայ բուրժուազիայի  
իդեոլոգիայի—հայկական լիբերալիզմի հետ\*): «Նորածիլ  
բուրժուազիան, ասում է նա իր հոգևածում, կարողացել է  
իր կողմը քաշել և մանր բուրժուական տարրերին (եջ 211):  
Ապա դառնալով թուրքահայ հարցին, նկատում է՝ «դեռ

\*) Տես՝ Ա. ՄԱՐՏՈՒՆԻ. «Հ. Հովհաննիսյանի և Ալ. Ծատուր-  
յանի բանաստեղծությունների հասարակական արժեքը»: «Փա-  
րուն» III. Մոսկվա. 1912. էջ 212:

մինչ-լիբերալիզմը նա մտքեր ե հուզում, իսկ նորածիլ հայ բուրժուազիայի իդեոլոգիան իր պատգամների շարքում նրան կենտրոնական տեղ տվեց, վոր ավելի վառ գույն ըստացավ շնորհիվ ուստանկական պատերազմի»:

Հայ լիբերալիզմի հրապարակախոսը—Արծրունին եր, իսկ գեղագետները—Գամառ-Քաթիպան, Րաֆֆին և հետագայի «աշակերտ-սերունդը»: 80-ական թվականների հայ բանաստեղծությունը Մարտունու համոզմամբ բնորոշվում ե իր ավելի կրավորական հոգեբանությամբ: «Ձրկա, ասում ե նա, Գամառ-Քաթիպայի կովող գրիչը, չկանրա ըմբոստ վոգին, բացակայում ե նրա հեղափոխական քարոզը: Անհանգիստ ուսուցչի աշակերտները մեղմ են. նրանք զբաղված են ուրիշների գութը շարժելով, զգացմունքների վրա ազդելով: Մարտնչող հայրենասիրության հայ բանաստեղծության ծոցում հետեվում ե կրավորական ազգասիրությունը. մարտական խիզախ վոգին փոխարինվում ե լալկանությամբ, վոր այնուհետև գրականության մեջ բավականին մեծ տեղ ե գրավում: (եջ 223).

Յովհաննիսյանը և Ալ. Ծատուրյանը քննվում են, վորպես նոր այդ «լալկան» սերնդի մունետիկներ: Նրանք տարված են նաև «մանր-բուրժուական» ձգտումներով: Սակայն «լիբերալիզմը վոչ մի տեղ և վոչ մի ժամանակ գերծ չի մնացել մանր-բուրժուական իդեոլոգիայից, քանի վոր դեմոկրատական տարրերի շահերի պաշտպանությունը և այդ տարրերի դեկավարությունը բուրժուազիան միշտ ել հոժարությամբ իր վրա յե վերցրել (Ա. Մարտունի. եջ 231): Հողվածի վերջին մասում Մարտունին կանգնում ե հայ բանաստեղծների «դեմոկրատական» յերգերի վրա և շեշտում ե «նոր ժամանակների տրամադրության ազդեցությունը» Ալ. Ծատուրյանի վրա: Յուցադրելով այդ «դեմոկրատիզմի» խիստ տժգույն բովանդակությունը, նա միաժամանակ ընդգծում ե, վոր «այդ հանգամանքը (դեմոկրատական տոնը) գնահատելի յե, քանի վոր նա հականերդաշնակություն ե մտցնում այն-

տեղ, վորտեղ հայ ազգի հայտնի թե անհայտ գեղարվեստագետները չեն գաղարում անշնորք կերպով ծամծամելուց այն բոլոր փտած մտքերն ու անարժեք գաղափարները, վոր ժամանակ ե վերջապես գահավիժելու իրանց անարժան բարձրությունից և հնության գիրկը նետելու» (եջ 247—9):

Այդ տողերով ել վերջանում ե Մարտունու հողվածը:

Մեր մարքսիստական գրականության մեջ այդ ուրվագիծը այժմ ել միակ ուսումնասիրությունն ե Յովհ. Յովհաննիսյանի և Ալ. Ծատուրյանի մասին, վոր տալիս ե իրավամբ 80-ական թվականների հայ գրականության սոցիոլոգիական պատկերը:

Յերկրորդ կարեւոր ուսումնասիրությունը՝ Նալբանդյանին նվիրված հողվածներն են, վոր հետագայում գրեթե առանց փոփոխության լույս են տեսել Մոսկվայում առանձին հրատարակությամբ:

Միջայել Նալբանդյանը մեր անցյալ գրականության ամենասուր դեմքն ե: Գերցենի և Բակունինի բարեկամը, «յեզիպտական կուռքերի» դեմ կռվող անհաշտ «Շմամանուելը» և Ալեքսեյեվյան ըավելինի բանտարկյալը: Նրա մասին մենք ունենք մի շարք գրքեր և ուսումնասիրություններ: Յեթե չկանգնենք այստեղ հին հայ քննադատների, Երվ. Շահազիզի, Լեոի, Կուսիկյանի և Լ. Մանվելյանի տեսությունների վրա, պետք ե խոստովանենք, վոր «նոր» քննադատությունն ել (Յե. Պալյան, Թ. Ավդալբեկյան, Սիմ. Հակոբյան, Դ. Անանուն, Արսեն Տերտերյան) չի կարողացել նշմարել և ընդգծել Միջ. Նալբանդյանի հրաշունչ աշխարհայեցողության հիմնական կողմերը: Այսպես որ. Յեր. Պալյանը բավականացել ե լոկ նրանով, վոր, համեմատել ե Նալբանդյանին ուտոպիական սոցիալիստների հետ և մեխանիկորեն կրկնել ե այն բոլոր ընդհանուր խոսքերը, վոր սովորաբար ասվում ե ուտոպիական սոցիալիզմի մասին: Ավելի հետաքրքրական կերպով յեն մոտեցել «Յեր-

կրագործութեան» հեղինակի լուսաբանութեանը Թագ. Ավ-  
դալբեգյան և Սիմ. Հակոբյանը, թեյեվ դրանք յեվս ի-  
րենց գլխավոր ուշադրութեանը բեվեռել են «Յերկրա-  
դործութեան» վրա:

Այ. Մարտունին չի բավականանում դրանով և առաջինն  
ե լինում մեր գրականութեան մեջ, վոր կանգնում ե հայ  
«մարտնչող» մատերիալիստի փիլիսոփայական աշխար-  
հայեցողութեան վրա: Նա առաջինն ե լինում, վոր շեշ-  
տում ե Նալբանդյանի հասարակական-սոցիալական իմաս-  
տասիրութեան կապը յուրորինակ մատերիալիստական ի-  
մացականութեան հետ: Խիստ սեղմ վոճով գրված, ընդա-  
մեն 34 եջից բաղկացած մի բրոշյուր ե Մարտունու ու-  
սումնասիրութեանը, վոր հսկայական նյութ ե մատակա-  
րարում հայ հասարակական մտքի պատմութեան լուսա-  
բանութեան համար:

«Նալբանդյանին, ասում ե Ա. Մարտունին իր գըր-  
քի մեջ, մեզ մոտ չգիտեն. իմացողներն ել նրան չեն  
հասկանում, Նազարյանի հետ միաժամանակ հիշվում ե  
Նալբանդյանը, հայ լիբերալների անվանաշարքում հիշա-  
տակվում ե և Նալբանդյանի անունը»: Ապա շեշտելով, վոր  
«Նալբանդյանը վորոշ ժամանակ, մտածել ե այնպես, ինչ-  
պես և նրանք, նա ընդգծում ե, վոր «իր կյանքի՝ ամե-  
նաբեղմնավոր և ամենահասուն շրջանում Նալբանդյանը  
ներկայանում ե մեզ, վորպես այլ գաղափարների տեր  
մի մարդ, վորը տարբերվում ե Նազարյանից ու լիբե-  
րալներից»:

Դառնալով Նալբանդյանի հենց այդ «ամենահա-  
սուն» շրջանի գործունեութեանը Ա. Մարտունին առանձ-  
նապես շեշտում ե Լուդվիգ Ֆեյերբախի ազդեցութեանը  
Նալբանդյանի վրա:

Նալբանդյանը, ինչպես հայտնի յե, բացի «Յերկրա-  
գործութեանից», գրել ե նաև բավական մեծ մի հոդված  
«Հեգելի» մասին (Հեգելը և նրա ժամանակը): Յեվ ահա  
կանգնելով հենց այդ հոդվածի քննութեան վրա և ընդգը-

ծելով Նալբանդյանի վոչ կատարյալ ծանոթությունը Հեգելյան թեորիայի հետ՝ Մարտունին գտնում է, վոր Նալբանդյանը ծանոթ եր վորոշ չափով նաև Հեգելյան դիալեկտիկայի հետ: «Հեգելյան մեթոտի բացահայտումը, ասում է նա, մենք գտնում ենք Նալբանդյանի ամենաընտիր ու հասուն աշխատություններում, ինչպիսիներից է «Յերկրագործություն, վորպես ուղիղ ճանապարհ»<sup>\*)</sup>: Ճիշտ է, այդ դիալեկտիկան Նալբանդյանի մոտ կրում է «ընդհանուր, անորոշ» և սխալ ու հակասական կերպարանք, սակայն հայ իրականության կոնկրետ պայմաններում և Նալբանդյանի ապրած եպոխայում նրա առաջադրած յուրորինակ մատերիալիզմն ել ինքնատիկության հեղափոխական յերեվույթ եր:

Քննության յենթարկելով Նալբանդյանի սոցիալական հայացքները Ալ. Մարտունին այսպես է բնորոշում նրան՝ «Յեվրոպական իրականությունը և յեվրոպական միտքը մեր հրապարակախոսի վրա ունեցել են իրենց ազդեցությունը. նրա հասարակական դեմքը պարզվել է ռուսական կյանքի և ռուս մտածողների շնորհիվ. իսկ հայ իրականությունը ուղղություն է տվել նրան, նախ վորոշել է նրա իդեոլոգիան: Նալբանդյանը ամենից առաջ և ամենից շուտ հայ կյանքի ծնունդ է»: Նա մեկնում է մանր-բյուրգերական իդեոլոգիայից. նա կանգնած է ժամանակի ամենադեմոկրատիկ խավի, մեր կյանքում իհարկե, շահերի տեսակետի վրա: Այդ խավը—հասարակ ժողովուրդն է»:

Նալբանդյանի ընդհանուր փիլիսոփայական և տնտեսական հայացքները լի յեն հակասություններով: Սակայն այդ բոլորը «ժամանակի կնիքն» եր: Իր բոլոր հակասություններով հանդերձ «Նալբանդյանը իր շրջանի գրողների շարքում մի յեզակի դեմք է՝ շնորհիվ հայ ճղճիմ իրականության համար արժեքավոր նորություն ներ-

<sup>\*)</sup> Ալ. ՄԱՐՏՈՒՆԻ, «Մի քայել Նալբանդյան», Հրատարակչայկ. Կենտրոն. Կոմիսարիատի, Մոսկվա, 1919, եջ 18.

կայացնող իր գաղափարների գրական տարրերի, վորոնք մինչեւ այժմ եւ չեն կորցրել իրանց թարմությունը: Յեւ այսքանն եւ բավական է, վորպեսզի հայ մտավորականության ձախակողմյան թեփն ու հայության պրոլետարական տարրերն այսոր յերախտագիտորեն ծունր չոքեն խոշոր գրողի հիշատակին» (եջ 33):

Յես չեմ կանգնում Մարտունու գրքի մնացյալ կողմերի վրա:

Ծանր և հարատև հեղափոխական քաղաքական գործունեյությունը հնարավորություն չի ստեղծել Մարտունու համար՝ պարզաբանել ավելի մանրամասն Նալբանդյանի այնքան բնորոշ աշխարհայեցողության հիմունքները:

Բայց և այնպես, խիստ սեղմ և միաժամանակ չափազանց պարզ այն մտքերը, վոր արտահայտել է նա Նալբանդյանի դավանած սոցիոլոգիական հայացքների մասին, հետաքրքրական ուղիներ են գծում Նալբանդյանի գործի հետագա տեսաբանների համար:

Իր մի ուրիշ հոդվածում, դառնալով նորից Նալբանդյանին, Ալ. Մարտունին վորոշ կապ է հաստատում նրա և հետագա սերունդի մեջ: Խարազանելով հայ բուրժուական ինտելլիգենտի տրադիցիոն տիպը, նա գծում է ընդհանուր տաղտկալի Ֆոնի վրա Նալբանդյանի «խոշոր արձանը», վորը «խիզախ հեզնանքով վերից-վար նայում է այդ բոլոր դաշնակցականներին, չարչիներին, վաճառականներին, վողբասացներին»:

«Նալբանդյանը, կարդում յենք միեփնույն հոդվածի վերջին մասում, տասնյակ տարիների, յերկար ժամանակների միջով ու հարյուրավոր, հազարավոր մեշչանական գլուխների վրայով մեզ է նայում յեւ միանում է արդի մարտնչող բանվորությանը, նրան սատարող աղքատ գյուղացիության» \*):

\*) Տես՝ Ա. Ա. ՄԱՐՏՈՒՆԻ. «Միք. Նալբանդյանն ու հայ ինտելլիգենցիան», «Պայքար», 1923. № № 12-13, եջ 2:

Ինչպես տեսնում ենք անուղղակի կերպով Ա. Մարտունին իր այդ պարբերութեամբ կապում է մարտնչող Նալբանդյանին XX դարի մարտական եպոխայի հետ, և դրանով արդեն հաստատում է նրան ամուր հեղափոխական ֆունդամենտի վրա:

Այլ Մարտունու գրաքննական գործերի մեջ խիստ կարևոր տեղ է բռնում նաև նրա դասախոսությունը «Հովհ. Հովհաննիսյանի, Ա. Ծատուրյանի և Հովհ. Թումանյանի բանաստեղծութեան հասարակական արժեքի մասին»: Այդ դասախոսությունը նա կարդացել է միջազգային պատերազմի զրեթե նախամուտին, 1914 թվի մարտի 8-ին, Մոսկվայի Պոլիտեխնիկական Մուզեոնի լսարաններից մեկում: Մեզ հասած հայտարարությունից տեղեկանում ենք, վոր այդտեղ ընդհանուր կերպով արծարծվել է «Գարուն» ժողովածուի մեջ արծարծված հոդվածի նյութը այն տարբերութեամբ միայն, վոր դասախոսութեան մեջ առանձին տեղ է հատկացրվել նաև Հովհ. Թումանյանին: Հետագայում Թումանյանի ստեղծագործութեան այդ քննությունը նորից գրավում է Մարտունուն և առիթ է ծառայում նոր և ավելի լրիվ ուսումնասիրութեան համար:

Թումանյանի մասին գրել է, ինչպես հայտնի յե և Գ. Անանունը, վորը անվանել է հայ բանաստեղծին «անցյալի մեծարանքը» յերգող պոետ: «Հովհ. Թումանյանի քնարը, ասում է նա, յերգում է հասարակական մանկութեան այս կամ այն դրվագը...», «...Սասունցի Դավիթը» կամ «Լոռեցի Սաքոն» իրանց պարզութեամբ պատճառում են գեղարվեստական հաճույք և թարմություն...»\*) Այլ Մարտունին չի բավականանում չափազանց ընդհանուր այդ բնորոշումով և բավական մանրամասն կանգնում է Թումանյանի այն գործերի վրա, վորոնք դուրս են բերում վոչ միայն «նահապետական» աշխարհը, այլևս «անցման» շրջանը: «Կյանքի զարմանալի դիալեքտիկայով, շեշ-

\*) Տես՝ «Գարուն» ժողովածու, Մոսկվա, 1912, Հատ. III և՛ 127—128.

տում ե Ա. Մարտունին, բանաստեղծը արձագանք ե տրվել յերկու տարբեր, սակայն իրար հաջորդող կարգերին՝ նահապետական-ընական յեվ կապիտալիստական փողային»։\*) Թումանյանը կարողացել ե պատկերել մեծ թափով հայ կյանքի դիֆերենցիացիայի առաջին շրջանի այս կամ այն յելեվեջը», կոչ ե արել «հաղթել հարստին և իշխանավորին» ու հենց դրա համար ել նրա «սոցիալական այդ գործերը դրական յերեվույթ են ներկայացնում և հայ բուրժուական գրականության ծոցում բացառիկ դիրք են գրավում»։ Ընդգծելով հայ բանաստեղծի «աշխատավորականության» ապադասակարգային բնույթն և պրիմիտիվիզմը, Ալ. Մարտունին շեշտում ե միաժամանակ և այն, վոր Թումանյանը «մաշելով անցման շրջանը, հին դասակարգերի քայքայման և նորի ծագման եպոխտն, անցնելով հայ գրականության հին շկոլայից, անխուսափելիորեն ըմբռնել ե հին կարգերի բացասականությունը»...

Այդ մեկնությունը դարձյալ մոտենում ե իր մի անկյունով այն տեսակետին, վոր իր ժամանակ արժարծել ե Մարտունին Միք. Նալբանդյանի մասին։

Նա չի ժխտում, չի բացասում ուսս նիհիլիստների կամ նորագույն անիշխանական քննադատների նման, այլ աշխատում ե հասկանալ և բացատրել «հին» կուլտուրական արժեքները վորոշ պատմական շրջանակի և պերսպեկտիվի մեջ։

Հայաստանի «գյուղական» ջիղը շատ լավ եր ծանոթ Ալ. Մարտունուն։ Նա շատ անգամ եր կոչ անում և հեղինակներին, և հասարակական գործիչներին լինել ավելի ուշադիր և նրբանկատ գյուղական իրականության նկատմամբ։ Հետաքրքրական ե այդ կողմից Ալ. Մարտունու քննական տեսությունը հայ նորագույն այսպես կոչված «պրոլետարական հեղինակների» մասին։

\*) Ա. Ա. ՄԱՐՏՈՒՆԻ. «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը»։ Թիֆլիս, 1923, եջ 32.

Ինչպես հայտնի է, բանաստեղծ Ազատ Վշտունու ձեռներեցությամբ 1920-ին մի խումբ յերիտասարդ բանաստեղծներ ձեռնարկել էին «Մուրճ» անունով գրական-գեղարվեստական մի հանդես: Իրապես «Մուրճ»-ի աշխատակիցները ձգտում էին արվեստական կերպով ստեղծել Հայաստանում պրոլետարական գրականութուն և արվեստ:

Մեր քննադատների շարքում դարձյալ Ալ. Մարտունին առաջինն է լինում, վոր ամենասուր քննադատության է յենթարկում գյուղական Հայաստանի եքսպասիվ յերիտասարդների «ինդուստրիալ» այդ պոեզիան: Ընկերական մտերիմ շեշտով նա հիշեցնում է նոր բանաստեղծներին, վոր գործարանների և այերոպլանների միորինակ նկարագրութունը գյուղական Հայաստանում չի կարող գեղարվեստական ստեղծագործության առարկա դառնալ և պիտի կրե արվեստականության դրոշմ: Քննադատելով «Մուրճ»-ի շուրջ խմբված պրոլետարական գրողներին Ա. Մարտունին կոչ է անում նրանց ավելի մեծ ուշադրութուն բեվեռել իրական Հայաստանի վրա, հայ գյուղի և գյուղացիության կյանքի վրա ու ավելի մեծ թափով կառչել «հողին» և կենդանի իրականության: Ժխտելով «պրոլետարական» գրականության մեխանիքական և արվեստական պատվաստումը մի իրականության մեջ, վոր տակավին հեռու յե արդյունաբերական յերկիրներին հատուկ կոլորիտից, Ալ. Մարտունին ընդգծում է առանձին ույժով այն միտքը, վոր պրոլետարական գրողների արվեստական ճիգերը դատապարտված են կատարյալ անհաջողության և անկման:

Դրա համար ել իր մասնավոր խոսակցութունների ժամանակ նա միշտ առանձին տեղ եր հատկացնում Գուրգ. Մահարուն հենց նրա համար, վոր վերջինը կարողացել եր կտրվել ռուսական պրոլետարական հեղինակների տաղակալի կրկնութուններից ու հակառակ ընդհանուր «մոդային» առաջին փորձն եր արել մոտենալու հայ գյուղական միջավայրի լուսաբանությանը նոր տեսակետից:

\* \* \*

Մեր տեսությունը յերկարացավ:

Յես չեմ կանգնում այլևս ընկ. Մարտունու ուրիշ հողվածների և ակնարկների վրա:

Նրա թողած գրական ժառանգությունը խիստ մեծ է, և կարոտ առանձին, ավելի մանրամասն տեսության: Իմ նպատակս եր շեշտել ա՛յն, Վոր Մարտունին առաջինը լինելով հայ նորագույն մարքսիստական քննադատության շարքերում, միաժամանակ հատկանշվում է իր միշտ ինքնուրույն մտեցումով դեպի քննության առարկան:

Մարքսիստ լինելով հանդերձ, նա խուսափել է այն միակողմանիությունից, Վորը նոր ուսու գրականության մեջ կոչվում է «շուլյատիկով շինա» և Վորի բնորոշ ներկայացուցիչն է յեղել մեզ մոտ տխրահռչակ Իշխանյանը: Յեվ միաժամանակ միշտ կարողացել է ասել իր սեփական խոսքը ու շեշտել իր առանձին տեսակետն ու վերաբերմունքը:

Իրա համար ել նրա նույնիսկ կարճ հողվածներն ու սեղմ տեսությունները մարքսիստական հրապարակախոսության սկզբնական շրջանը բնորոշելով հանդերձ—կարելի Վոր նյութ են մատակարարում հայ նոր գրականության տեսական վերլուծության համար և գծում են մարքսիստական մեր հետագա քննադատության ուղին:


Ա. Կարինյան.





Ա. ՄՅԱՄՆԻԿՅԱՆ

1924 թ.



W. B. BENTLEY

1891

# ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻՆ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

(Հուշեր)

1.

Անդրկովկասյան ժողովուրդների աշխատավոր զանգվածները 1925 թ. մարտի 22-ին կորցրին իրենց լավագույն ղեկավարներից մեկին — Ա. Մյասնիկյան-Մարտունուն:

Ողային տարերքը լիովին նվաճած չլինելու հետեւանքով, մարդկային գիտելիքների տակավին շոշափելի թերութեան շնորհիվ, «Յունկերս» ողաչու մեքենան հրդեհով բռնվեց, և բոցերում ածխացավ Ա. Մյասնիկյանը:

Չկա այլեւս այդ խոշոր կուսակցական, քաղաքական և հասարակական գործիչը: Չի նայում նրա խոհուն, պայծառ դեմքը, չի հնչում նրա սուր և սահուն ձայնը, չի շարժվում նրա հատու, խարազանող և վոգեշնչող գրիչը, չի գործում նրա պարզ, հարուստ և փայլուն միտքը:

Սակայն Մարտունին իր ամբողջ հասակով կանգնած է մեր առջեւ: Նրա գործերի, ստեղծագործական կարողութեան արդյունքների մի խոշոր շարան պարուրում է մեր հիշողութիւնը: Այսօր այդ հիշողութեան բովանդակութիւնը կարող է կրել ընկերական և մտերմական կապերի կնիք, և վորքան ել ջանաս նրա վողբերգական մահից հետո անցած մի ամսյա ժամանակի ասպեկտում անաչառ լինել, այնուամենայնիվ, սեփական հույզերը և զգաց-

մունքները պետք է ճնշեն հոգիդ և այս կամ այն կերպ սուբյեկտիվ գունավորում տան հուշերիդ:

Այդպիսի յե մարդկային հոգեբանությունը:

Մարտունու գիտական կենսագրությամբ ապագայում զբաղվողները, Հայաստանի և Անդրկովկասի կոմունիստական շարժման ապագա պատմագիրները, Հոկտեմբերյան Հեղափոխության նախապատրաստման և հաղթանակի համար ապրած ու գործած մարտիկների սոցիալական արժեքը հետազոտողները, սուբյեկտիվ ապրումներից ազատ լինելով, անկասկած ավելի ոբյեկտիվորեն կարժեքավորեն Մյասնիկյանի յերախտիքը և նշանակությունը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության բանվոր դասակարգի ազատագրական պայքարում:

Հավակնություն չունենալով այս հոդվածի նյութ դարձնել Ա. Մյասնիկյանի 20-ամյա հեղափոխական, կուսակցական և հասարակական գործունեյության վորեվե շրջանը, հետազոտության իմաստով, մենք ամփոփում ենք մեր հուշերը տպավորությունների շրջանակում, սահմանափակվելով 1921—1925 թ. ժամանակամիջոցում:

2.

Խորհրդային Հայաստանում 1921 թ. փետրվարի 17 շարժված հակահեղափոխական հիդրայի գլուխը Չախճախված է: Դաշնակցության՝ հայ ժողովրդի գլխին բերած արկածների շղթայի վերջին ողակը՝ փետրվարյան ապստամբությունը, պատուվել է Հայաստանի բանվորի, կարմիր զինվորի և չքավոր գյուղացու ձեռքով: Հեռավոր Արխանգելսկից մինչև Յերեվան Խորհրդային տերիտորիայի և վոչմի գավառին այլեվս զգալի վտանգ չի սպառնում: Հայաստանի հակահեղափոխությունը գլխեկորույս, կազմալուծված ու քայքայված չվել և Զանգեզուր, ապավինելով «փրկարար» Նժդեհին և Սյունիքի «անառիկ» լեռներին, թողած Հայաստանի դաշտերում ու լեռներում սովալլուկ վորբեր, աստանդական գաղթականներ, դիակների կույ-

տեր, ավերված շենքեր: Այս դժոխային պատկերի հանդեպ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը մի վայրկյան անգամ չվարանեց վերստին իր ձեռքն առնել Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների ազատագրական կռիւի, տնտեսական և կուլտուրական շինարարութեան ղեկը: Անդառնալի կերպով Կոմունիստական կուսակցութեան դրոշակին եյին փարել Հայաստանի աշխատավորական լայն զանգվածները: Նրանց դեպի Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութիւնն եր մղել անցյալի դառն փորձը, դասակարգային արթնացած գիտակցութիւնը, այն խորն համոզմունքը, վոր կոմունիզմի ուղիներով միայն իրենց յերկիրը կարող ե վերածնվել, իբրև մի տնտեսական և կուլտուրական միավոր: Ազգային ընդհարումներից և դասակարգային ճնշման կապանքներից ազատագրվելու ձգտումն ու քաղաքակիրթ մարդկութեան կուլտուրական նվաճումներին հարակից լինելու պոտենցիալ կամքն եր, վոր Հայաստանի բանվորին և չքավոր գյուղացուն դարձրել եյին կոմունիզմի մարտիկներ: Այդ ձգտումն ու կամքը կարոտ եյին մարմնավորման և կենսագործման: Յեվ բանվորա-գյուղացիական հաստատուն հողի վրա Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնը ձեռնամուխ ե լինում Հայաստանի աշխատավորութեան կյանքի նոր բովանդակութեան ստեղծագործութեանն ու նրա նոր ձեւերի կազապարմանը: Այդ համառ և ծանրակշիռ աշխատանքը մեր յերիտասարդ կուսակցութիւնից պահանջում եր հմուտ և փորձառու ղեկավարներ: 1921 թվի մայիսի 1-ին Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը և Հայաստանի աշխատավորութիւնը ստանում են հեղափոխութեան հնոցում կոփված այդ ղեկավարներին՝ հանձինս ընկ. ընկ. Ա. Մյասնիկյանի (Մարտունու) և Ս. Լուկաշինի (Սրապիոնյանի):

Յերկու ընկերների Հայաստան գալը մեր հակառակորդներն արտասահմանում վորակում եյին, վորպես Խորհրդային Ռուսաստանի գործակալութեան հաստատումն Հա-

յաստանում և սրա գաղութայնացում: Այս խարդախ սուտը վոչ միայն հակահեղափոխական մի հերյուրանք եր՝ վարկաբեկելու Հայաստանի Պորհրդային կառավարութիւնը, այլ և հայ բուրժուազիայի և նացիոնալիզմի «գործակալային» եյության հոգեբանական արտացոլումն էր:

Հայ բուրժուազիան և նրա քաղաքական կազմակերպութիւնները տասնյակ տարիներ իմպերիալիստական այս կամ այն պետութիւն գործակալի դերն են խաղացել Մերձավոր Արևելքում: Յե՛վ այժմ ել նրանք չեն հրաժարվում այդ դերից: Նման դրութիւնը ծնել է նրանց մեջ «գործակալային» գիտակցութիւն ու հոգեբանութիւն և այդորինակ գիտակցութեամբ ու հոգեբանութեամբ էր, Վոր նրանք մոտեցան ընկ. ընկ. Մարտունու և Լուկաշինի Հայաստան գալուն՝ Մոսկվայից:

Սակայն Հայաստանի այդ յերկու խոշոր պետական, քաղաքական և հասարակական գործիչները նոր շեյին կապվում հայկական հասարակայնութեանը: Դեռ պատանեկական հասակից նրանք նետվում են հայ բանվորութիւն հեղափոխական պայքարի ասպարեզ, ըմբռնելով այդ պայքարն իբրև Ռուսաստանի բանվորութիւն ազատագրական մեծ գործի մի անբաժան մաս:

Յե՛վ այն հանգամանքը, Վոր Հայաստանի աշխատավորութիւնը և սրա հետ ձեռք ձեռքի ընթացող հայ մտավորականութեան ազնիվ մասը անեծքով ու գայրույթով են վերհիշում հայ բուրժուազիայի գործակալային դերը հայ հասարակական կյանքի անցյալի նկատմամբ ու համախորժված կոմունիստական կուսակցութեան դրոշի ներքո կառուցում են իրենց նոր կյանքը նրա նիշած ուղիներով, — դա լավագույն պատասխանն է հայ բուրժուական նացիոնալիզմի հակահեղափոխական հերյուրանքների ընկ. ընկ. Մյասնիկյանի և Լուկաշինի Ռուսաստանից Հայաստան տեղափոխվելու առիթով:

Այլ Մարտունին Հայաստան յեկավ, գլխավորելու Հայաստանի պետական իշխանութիւնը: Մինչ Հայաստան

գալը նա արդեն ձևակերպված, փորձառու ղեկավար եր  
խորհրդային, զինվորական և կուսակցական այլևայլ աշխա-  
տանքների բնագավառներում: Հայաստանի պետական ղե-  
կը նա ստանձնեց այնպիսի պայմաններում, յերբ հարկ  
կար ցուցաբերելու խոշոր ղեկավարի կարողութուններ:  
1920 թվի նոյեմբերին ծնունդ առած խորհրդային պետա-  
կան ապարատը, վերականգնելով 1921 թ. ապրիլի 2-ին,  
ծայր աստիճան թույլ եր և անկազմակերպ. նախկին հե-  
ղափոխական կոմիտեների (հեղկոմների) սիստեմը, թե իր  
գոյության կարճ ժամանակահատվածի տեսակետից և  
թե ըստ իր ձևի չեր կարող լայն աշխատավորական  
զանգվածներ ընդգրկել: Մասսայական որգանների—խոր-  
հուրդների բացակայութունը զգալի խոչընդոտ եր՝ առա-  
ջադրելու և լուծելու այն բազմաթիվ հրատապ ու անհե-  
տաձգելի շինարարական խնդիրները տնտեսական և կուլ-  
տուրական բնագավառներում, վորոնք կանգնած էին  
Հայաստանի աշխատավորության առջև իրենց ամբողջ  
հասակով: Իր առաջին իսկ ճառում՝ արտասանած Յերե-  
վանի կուսակցական և արհեստակցական կազմակերպու-  
թյունների միացյալ նիստին, յեթե չեմ սխալվում մայիս  
մեկին, Մյասնիկյանը նիշեց այդ կարևոր հանգամանքը և  
կուսակցության առաջ դրեց խորհուրդների սիստեմին անց-  
նելու անհրաժեշտության խնդիրը, իբրև հրամայական մի  
պահանջ: Չգիտեմ, արդյո՞ք մի վորևե տեղ լիովին արձա-  
նագրված ե այդ ճառը, թե հարկ պիտի լինի հիշողությամբ  
միայն այն վերարտադրել, սակայն անհրաժեշտ ե ընդգր-  
ծել, վոր դա կոմունիստական կուսակցության և Խորհրդ-  
դային իշխանության Հայաստանում վարելիք քաղաքա-  
կանության մի ամբողջ պլատֆորմ եր, վոր հետագայում  
ավելի շեշտված բնույթ ստացավ համահայաստանյան ան-  
դրանիկ համագումարին—1922 թվի հունվարի 30-ին ներ-  
կայացրած Մյասնիկյանի ղեկույցում՝ «Մեր քաղաքակա-  
նության ու հերթական խնդիրների մասին»: Այդ ղեկույ-  
ցի մեջ Հայաստանի պետության ղեկավարը նիշեց Հայաս-

տանի քաղաքականութեան ու տնտեսական շինարարու-  
թեան ընդհանուր ուղիները.

...«Հին կառավարութիւնից մենք ստացանք քանդ-  
ված յերկիր,—ասում է Ա. Մարտունին,—քայքայված ժո-  
ղովուրդ: Պետք էր նախ կարգի բերել ա՛յն և ապա անց-  
նել շինարար աշխատանքի: Յերբ այս խնդիրը դրինք իմ-  
ք և մեր կետ նպատակ, մեր արտաքսված թշնամիները կամ  
յերկրի զանազան անկյուններում ապաստանած թշնամի-  
ները այստեղ ու այնտեղ հակահեղափոխական բռնկումներ  
եյին առաջ բերում, վորպեսզի յերկիրը հասցնեն վատ-  
թարագույն դրութեան»: (Ա. Մարտունի, Խորհրդային Հա-  
յաստանի ուղին, էջ 6, Պետական Հրատարակչութիւն,  
Թիֆլիզ, 1914 թ.): Շինարար աշխատանքի հանգիստ պայ-  
մաններ կարելի յեր ստեղծել լոկ այն դեպքում, յետ առա-  
ջին հերթին վերջ տրվեր 1921 թվի ապրիլի 2-ին Չանգե-  
զուր ապաստանած Հայաստանի ջարդված հակահեղափո-  
խութեան վերջին մնացորդներին: Այն ժամանակ Հայաս-  
տանում գտնված ռուսական և հայկական զինական ուժե-  
րի քանակի և մարտական կարողութիւնների տեսակետից  
առանձին վոչ մի դժվարութիւն չէր ներկայացնում Չան-  
գեզուրի լեռներին կառչած Ս. Վրացյանի և Նժդեհի բա-  
րոյալքված ու կազմալուծված խմբապետական թափթը-  
փուկների լիկվիդացիան զենքի ուժով: Սակայն Մյանիկ-  
յանը և՛ վորպես վողջ պետական կյանքի դեկավար, և՛  
մասնավորապես, վորպես զինվորական գործերի ժողովրդ-  
դական կոմիսար՝ ասլրում էր այն գիտակցութեամբ, թե  
Ղամարլույի, Ախտայի և այլ շրջաններում տեղի ունեցած  
քաղաքացիական պատերազմի հետևանքով առաջացած  
տակավին թարմ ավերածութիւններին, Չանգեզուրի հա-  
կահեղափոխութիւնը զինական միջոցներով լիկվիդացիայի  
յենթարկելու դեպքում, կարող են ավելանալ նոր ավերա-  
ծութիւններ և նոր զոհեր՝ աշխատավոր գյուղացիութեան  
շարքերից: Ահա թե ինչու Հայաստանի կոմունիստական  
կուսակցութիւնը և կառավարութիւնը գործադրում են

բոլոր հնարավոր միջոցները՝ «վերացնելու կռվի հնարավորութիւնը» ըստ Ա. Մարտունու արտահայտութեան:

...«Դաշնակները չեյին կարող հաշտվել այն մտքի հետ, վոր այս յերկրում լինի խորհրդային իշխանութիւն: Նրանք անցյալ հունիս-հուլիսին զենք վերցրին մեր դեմ Չանգեզուրում: Սակայն մենք համբերատար յեղանք, գնացինք նախ նրանց մոտ՝ վերացնելու կռվի հնարավորութիւնը, բայց թշնամին առաջինը յեղավ, վոր թե՛ փետրվարին Յերևանում, և թե՛ Չանգեզուրում նախահարձակ յեղավ, նմանվելով առակի այն գայլին, վոր միշտ դեպի անտառն է նայում: Մենք պիտի զսպեյինք այդ գայլին և զըսպեցինք՝ կարմիր Բանակի շնորհիվ» (նույն տեղը, էջ 9):

Տողերիս գրողին վիճակվեց «այդ գայլին զսպող» կարմիր Բանակը հետ մտնել Չանգեզուր: Նժդեհի կառավարութեան թողած թռուցիկները, վոր մեր ձեռքն ընկան, Հայաստանի կառավարութեան «համբերատար» քաղաքականութիւնը բացատրում էյին իբրև Խորհրդային իշխանութեան թուլութիւն, մինչդեռ էյապես, Չանգեզուրից նախահարձակ լինելը Դարալագյազի վրա վոչ այլ ինչ էր, յեթե վոչ մի վերջին հուսահատ փորձ՝ ուղղմական շարժողութեան մեջ դնելու Նժդեհի քայքայված գործառնները, անվտանգ փախուստը դեպի Պարսկաստան ապահովելու նպատակով:

Չանգեզուրը ևս ազատված է խմբապետական հորդաններից. վողջ յերկրում վերահաստատված է հեղափոխական կարգը. շինարարական խնդիրներն են, վոր իրենց ամբողջ ընդարձակութեամբ ծավալված են խորհրդային կառավարութեան առջև: Այդ խնդիրների կենսագործման հարցում կարող է պիտանի լինել հայ մտավորականութեան վորոշ շերտը, վորի մի մասը, դաշնակցական չլինելով հանդերձ, զոհ էր դարձել դաշնակցութեան պրովոկացիային ու փախել Պարսկաստան, իսկ մյուս մասն ապրում էր յերկրի սահմաններից դուրս՝ հայկական գաղութներում: Մյանսիկյանը առաջադրում է այն հարցը, թե անհրաժեշտ

ե այդ ցրված մտավորական ուժերից լավագույն և պիտանի խավը կենտրոնացնել Հայաստանում և ոգտագործել պետական կյանքի այլևայլ գավառներում: Վորպես զինվորական գործերի կոմիսար, զինվորական գործունեյության խոշոր փորձառությամբ ոժտված և Ռուսական Կարմիր Բանակի ականավոր գործիչներից մեկը, Մյասնիկյանը լավ գիտեր, վոր Խորհրդային Հայաստանի Կարմիր Բանակի ստեղծման և կազմակերպման գործում ոգտակար դեր կարող ե խաղալ դաշնակցական բանակի սպայության այն մասը, վոր կըհամաձայնի յենթարկվել Խորհրդային իշխանությանը և աշխատել նրա ղեկավարության ներքո: Այլ գիտակցությամբ նա հրավիրում ե Կարմիր Բանակի շարքերը մի քանի ամիս առաջ Հայաստանից Ռուսաստան աքսորված սպաների մի մասը:

Հեղափոխությունը լիովին հաղթանակեց վոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային վողջ տերիտորիայում. Խորհրդային հանրապետությունները մտան զարգացման նոր փուլը՝ խաղաղ աշխատանքի փուլը: Խորհրդային հանրապետությունների այդորինակ ներքին դրությունը զուգահիշվեց Հայաստանի պատմության այն շրջանին, յերբ Մյասնիկյանին վիճակվեց գլխավորելու Հայաստանի քաղաքական ու պետական կյանքը և վարելու նրա պետական մեքենան: Կանգնած այդ մեքենայի գլուխ նա իրականացնող հանդիսացավ Խորհրդային իշխանության այդ նոր փուլի պահանջի, վոր եր՝ լծել Հայաստանի աշխատավոր մտավորականությունը բանվորա-գյուղացիական զանգվածների շինարարական աշխատանքին:

Յեվ յեթե այսօր Հայաստանի աշխատավոր մտավորականությունը գործակցում ե աշխատավորական մասսաների հետ, տրամադրում իր ուժերը յերկրի տնտեսական և կուլտուրական շինարարության գործին, յեթե որ ավուր գաղութահայ ինտելիգենցիան ավելի ու ավելի յե դիմադարձ լինում դեպի Խորհրդային իշխանությունն ու Հայաստանը և ձգտում մասնակից դառնալու Հայաստա-

նի աշխատավորութեան ծավալած շինարարութեանը, —  
աշխատավորութեան և ինտելիգենցիայի այս ամբողջող կա-  
պի գաղափարի արծարծման ու կենսագործման նախա-  
ձեռնութիւնը, նշանավոր չափով անկասկած, պատկանում  
է Ա. Մյասնիկյանին:

Քիչ դեր չխաղաց Ա. Մարտունին շինարարական աշ-  
խատանքի հիմքերը գցելու և ընդհանուր դեկավարող ըս-  
կզբունքները մշակելու խնդրում: Վորպես տեսաբան-բայլ-  
շեիկ, վորպես լենինյան դպրոցի աշակերտ, նա չափազանց  
ճիշտ էր ըմբռնում այն հանգամանքը, վոր բանվորութեան  
և աշխատավոր գյուղացիութեան սերտ դաշինքն է, վոր  
կարող է և պետք է ապահովի բանվորութեան դիկտատու-  
րան ու սոցիալիստական կենսաձևերի կառուցումը: Թե  
իր հրապարակային յելույթներում, թե իր հրապարակա-  
խոսային հոդվածներում և թե գործնական աշխատանքի  
ընթացքում առավելապես շեշտակի յեր դնում նա գյու-  
ղացիութեան և բանվորութեան դաշինքի հարցը Խորհրդա-  
յին Հայաստանի կոնկրետ պայմաններում: Տեղյակ լինե-  
լով այդ պայմաններին, ուսումնասիրած հայկական իրակա-  
նութիւնը, քաղաքի և գյուղի սերտ կապի խնդիրը նիշեց  
նա Հայաստանի համար, վորպես ամենահրատապ խնդիր  
դեռ այն ժամանակ, յերբ այդ խնդիրը իր ամբողջ հասակով  
նոր տնտեսական քաղաքականութեան պայմաններում նոր  
էր ծառանում Խորհրդային Ռուսաստանի բանվորութեան և  
նրա առաջապահի՝ Ռուս. կոմունիստական կուսակցու-  
թեան առջև: «Մեր հոգսերից ամենախոշորն է, — ազդարա-  
րում է Մարտունին Հայաստանի բանվորա-գյուղացիական  
խորհուրդների Վ համագումարին, — քաղաքի բանվորութիւ-  
նը կապել գյուղացիների հետ, վորովհետեւ սուանց այդ յեր-  
կու ույժի կենդանի փոխհարաբերութիւնների շնք կարող  
տեղ դառնալ այս յերկրին: (Նույն տեղը, էջ 10, ընդգծու-  
մը մերն է Գ. Ս.): «Այդ յերկու ույժի կենդանի փոխհա-  
րաբերութիւններին» հոգսը, հետագայում, Թիֆլիզ փոխա-  
դրվելուց հետո, Մարտունուն էլ ավելի ուժեղ թափով է զբա-

դեցնում և նրա համար, իբրև Անդրկովկասի կուսակցական և քաղաքական կյանքի ղեկավարներինց մեկի, դառնում եմի «հոգս» անդրկովկասյան ծավալով: Ինչպես Հայաստանում, այնպես ել ամբողջ Անդրկովկասում, սնտեսական կյանքի վերականգման ու զարգացման գուզընթաց, կոմունիստական կազմակերպությունների կրթա-լուսավորական աշխատանքի շնորհիվ, կապը քաղաքի և գյուղի միջև գնալով ավելի ու ավելի յե ամրանում: Յեվ այս խոշորագույն գործում վիթխարի յե Մյասնիկյանի յերախտիքը: Նրա նիշած ուղիներով ե, վոր Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը ձեռնամուխ յեղան լենինյան հիմնական պատգամներից մեկի՝ բանվորության և գյուղացիության դաշինքի կենսագործման:

Ա. Մյասնիկյանին միշտ զբաղեցնող հոգսերինց մինն ել աշխատավորական լայն մասսաների կուլտուրական առաջխաղացության խնդիրն եր: Նա Հայաստան յեկավ՝ պատկառելի տեղ գրաված հայ մարքսիստական մտքի ապարիզում: Ա. Մարտունի անունով նա արդեն հայտնի յեր կովկասահայ բանվորության գիտակից մասին, վորպես տաղանդավոր հրապարակախոս, վորը մարքսիզմը, իբրև միջազգային բանվորության աշխարհայացք, կապում եր հայ հասարակայնության կոնկրետ պայմաններին և նրա լույսով վերլուծում այդ պայմանները: Խորապես համոզված ինտերնացիոնալիստ լինելով հանդերձ, նա միշտ կենդանի յեր պահում իբ կապերը հայ բանվորական շարժման և հասարակական կյանքի հետ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ նա ականավոր տեղ գրավեց Ռուսաստանի բանվորության հեղափոխական պայքարի ընթացքում, նա չխզեց իր կապերը հայ հասարակական շարժումից, ընդհակառակը հենց այդ շրջանումն ե, վոր լույս են տեսնում նրա յերկու աշխատությունը «Ազգային հարցը» և «Միքայել Նալբանդյանը»: Հանձինս Ա. Մարտունու ամբողջացած եր հետևողական, մինչ ուղն ու

ծուծն ինտերնացիոնալիստ հեղափոխականի, լենինականի տիպը՝ պատրաստ ու ձգտող մասնակցելու և ղեկավարելու, գործով ու խոսքով, այն ազգի աշխատավորութեան ազատագրական պայքարը, վորի ծոցից եր նա յելել: Այս գիծը նրա բնավորութեան հատկանիշ կողմերից մեկն էր, վոր, անշուշտ, պետք է որինակ ծառայի ինտերնացիոնալիստական վոգով այժմ դաստիարակվող մեր յերիտասարդ սերունդի համար:

Մյասնիկյանը կուլտուրատրեգեր եր բառիս ամենաընդարձակ իմաստով: «Լուսավորութեան գործը թողած՝ միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղվել չենք կարող» — զեկուցում է նա Հայաստանի Խորհուրդների անդրանիկ համագումարին: Լուսավորութեան խնդիրները Հայաստանում և Անդրկովկասում պակաս չափով չեյին գրավում նրա ուշադրութեանը, քան «տնտեսական և այլ խնդիրները»: Նրա որով եր և նրա ջերմ մասնակցութեամբ ու հովանավորութեամբ, վոր Հայաստանում հիմք դրվեց պետական համալսարանի, մատենադարանի, թանգարանի, թատրոնի, և այլ կուլտուր-կրթական հաստատութեաների:

Հիշում եմ, թե ինչպես վոչ միայն արտասահմանում գտնվող մեր քաղաքական հակառակորդներն էյին հանդիմանում Հայաստանի Խորհրդային կառավարութեանը կուլտուրական ձեռնարկութեաններ ստեղծելու վրա գործադրվող ծախքերի համար, այլև մեր կոմունիստ ընկերները կուլտուրական շինարարութեան այն ձեռներեցութեանը, վոր, սնկասկած, առաջին հերթին պատկանում եր Մյասնիկյանին, համարում էյին վոչ անհրաժեշտ և այն ժամանակվա հրատապ պահանջներից բղխող: Մյասնիկյանը յետ եր վանում մեր քաղաքական հակառակորդների նման «հանդիմանութեանները» և կոմունիստական կազմակերպութեաններին բացատրում կուլտուրական ու կրթութեան-լուսավորական խնդիրների կարևորութեանը: «Յեռամյա սոցիալիստական Հայաստանի առորյա խնդիրները նիշելով, նա այդ խնդիրների շարքում վոչ պակաս աջառ-

նապատվութիւնն ե հատկացնում ժողովրդական լուսավորութեան խնդրին, գտնելով, վոր «Հողը լավ մշակել, պատշաճ հագուստով ման գալ և կուշտ ապրել կարող ե նա, ով ունի գիր, գրականութիւնն, ունի վարժ և թափանցող միտք, ով իր նիստ ու կացի մեջ դիտե կիրառել կյանքի ու զարգացման գոնե ամենակարեւոր և շատ ընդհանուր որեւէքները կամ «կանոնները»:

Յեւ ներկայիս Հայաստանի աշխատավորութիւնը ընթանում ե կրթութեան, լուսավորութեան այն ուղիներով, վոր գծել ե նրա համար նրա սիրած առաջնորդը—Ալ. Մարտունի-Մյասնիկյանը:

Բանվորա-գյուղացիական պետութեան հիմքը Հայաստանում չեր կարելի ամրապնդել և աշխատավոր զանգվածների սոցիալիստական շինարարութեան հաստատուն նախապայմաններ ստեղծել, յեթե այդ զանգվածները յեղբայրական կապերով չկապվեյին իրենց հարևան Խորհրդային յերկրների աշխատավոր մասսաների հետ և խաղաղ կենակցութեան փոխհարաբերութիւններ չստեղծեյին վոչ Խորհրդային յերկրների՝ մասնավորապես Տաճկաստանի հետ: «Ներկա Խորհրդային Հայաստանը յեղել ե միակ յերկիրը, վոր կարողացել ե մի տարվա ընթացքում խաղաղութիւնն հաստատել իր յերկրում, դաշն կապելով հարևանների հետ և պահպանելով Հայաստանի ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը: Այս տեսակետն ունենալով, մենք գնացինք Ղարս, դաշն կապեցինք թիւրքերի հետ, վորոնք համարվում եյին Հայաստանի դարավոր թշնամիները... Նույն միջազգային քաղաքականութիւնը մենք տարանք Վրաստանի և Ադրբեյջանի վերաբերմամբ: Նախկին կառավարութիւնը նրանց հետ ել շարունակ կովի մեջ եր: Մեր որով վերջացան այդ վեճերը և այժմ կովկասյան խորհրդային բոլոր հանրապետութիւններն ապրում են յեղբայրաբար: Նորերս մենք ցանկութիւնն հայտնեցինք, վոր կովկասյան հանրապետութիւններն իրար հետ դաշն կապեն՝ ստեղծելով Խորհրդային Ֆեդերացիա» (Ալ. Մար-

տունի. Խողհրդային Հայաստանի ուղին. Պետական Հրատարակչութիւն. Թիֆլիզ 1924 թ. էջ 7.):

Իր անմիջական ղեկավարութեամբ Հայաստանի աշխատավոր ժողովրդի յեղբայրական կապերն ամրացնելով հարևան յերկրների աշխատավոր մասսաների հետ, Ալ. Մյասնիկյանը հետագայում յեղավ Անդրկովկասի Ֆեդերացիան ստեղծելու և այն ամուր հիմքերի վրա դնելու մեծ գործի ջերմ պաշտպաններից ու իրականացնողներից մեկը:

Անդրկովկասի բանվորութիւնը 1905 թվից սկսած մինչև 1917 թիվը միահամուռ ուժերով եր պայքարում ցարական ճնշող լծի դեմ: Բաքուն Անդրկովկասի այն վայրն էր, ուր այլազգի բանվորութեան միասնական պայքարը ցարիզմի և կապիտալի դեմ առաջին հերթին եր գտնում իր արտահայտութիւնը: Չնայած ցարական կառավարութեան Անդրկովկասում վարած քաղաքականութեան, մի քաղաքականութեան, վորի նպատակն էր բաժան-բաժան անել այլազգի աշխատավոր ժողովուրդները, հրահրել ազգային գժտութիւնները՝ իր հիմքերն անխախտ պահելու համար, այնուամենայնիվ Անդրկովկասի բանվորութիւնը իր դասակարգային պայքարի մեջ մի միաձույլ ամբողջութիւն էր ներկայացնում: 1917 թվին խորտակվեց ցարական լուծը: Անդրկովկասի իշխանութիւնըն անցավ իրենց «սոցիալիստներ» հորջորջող մենշևիկների, եսերների և դաշնակցականների ձեռքը: Սակայն այդ «սոցիալիստները» հետևողական հաջորդներ հանդիսացան ցարական ազգային տարանկման քաղաքականութեան՝ ավելի վատթար ձևով: Ինչպես Անդրկովկասյան Սեյմի, այնպես ել յերեք ազգային հանրապետութիւնների գոյութեան ուրով, հանրապետութիւններ, վորոնցից յերկուսի՝ Վրաստանի և Հայաստանի մեջ իշխանութիւնը գտնվում էր սոցիալիստական վերնազգեստով ծածկված, բայց եյապես նեխված ազգայնական կառավարութիւնների ձեռքը, սրբանց հրահրումներով ու ղեկավարութեամբ ազգային գրժ-

տություններն ել ավելի ծավալ առան: Յեւ ինչ տվեց  
յերեք ազգային պետությունների նացիոնալիստական կա-  
ռավարությունների յեռամյա իշխանությունը,— «Արյուն,  
պատերազմ, արցունքներ, աղքատություն և վողջ Անդր-  
կովկասի հարստության և նյութական ու հոգևոր կուլ-  
տուրայի կործանում» (Ա. Մյասնիկյանի ճառից՝ Ադրբե-  
ջանի խորհուրդների չորրորդ համագումարին 1925 թ.  
մարտի 2-ին): Խորհրդային իշխանությունը, վերջ տալով  
ազգային ընդհարումներին, պետք է ստեղծեր պետական  
այնպիսի ձև Անդրկովկասում, այլ կերպ ասած, անդրկով-  
կասյան աշխատավոր ժողովուրդների այնպիսի փոխհարա-  
բերություններ, վորոնց որով նրանք մի կողմից զորեղ  
լինելին իրենց դասակարգային պայքարի մեջ, մյուս կող-  
մից փոխադարձ ոգնության ու աջակցության միջոցով  
ավելի լայն հնարավորություններ ստեղծելին տնտեսա-  
կան և կուլտուրական բարգավաճման համար: Այսպիսի  
պետական ձև կարող եր լինել և յեղավ Անդրկովկասյան  
ժողովուրդների Ֆեդերացիան:

... «Յեւ այսոր,—ասում է Ալ. Մյասնիկյանը Անդր-  
կովկասյան Ֆեդերացիայի յերրորդ տարեդարձի առթիվ,  
—մեր փառունակ Անդրկովկասյան Ֆեդերացիայի յեր-  
րորդ տարեդարձի որը մեզանից յուրաքանչյուրը մի ցան-  
կություն ունի,—եւ ավելի ամրացնել այդ միությունը,  
եւ ավելի ամրացնել կապը անդրկովկասյան ժողովուրդ-  
ների միջև, վորպեսզի խորը թափանցել ժողովրդական  
մասսաների խորքերը և այնպիսի հաղթանակներ տանել,  
վոր ապագա սերունդը մեզ չարը չհիշի, այլ ասի՝ «Այո,  
մի ժամանակ ասլրել են մարդիկ, վորոնք իրենց ժամա-  
նակի լավագույն մարդիկ են յեղել! Այդ—կասեն մեր Խոր-  
հուրդների, մեր լավագույն բանվորների, լավագույն աշ-  
խատավոր գյուղացիության մասին: Նրանք կասեն, վոր  
դրանք մարդիկ եյին, վոր վոչինչ չխնայեցին, վոչ իրենց  
յեռանդը, վոչ իրենց կյանքը, վորպեսզի ստեղծեն անդր-  
կովկասյան ժողովուրդների միասնական ճակատը և աշ-

խատավորների յերջանկությունը»:

Այդ մարդկանց ու նրանց փառունակ դեկավարների թվին եր պատկանում Ալ. Մյասնիկյանը: Նա ապրեց ու պայքարեց հանուն մի մեծ գործի՝ աշխատավորների յերջանկության:

Վառ ու պայծառ կմնա նրա հիշատակը:

ԾՈՍԿՎԱ, 22 ապրիլի.

Դր. Սիմոնյան



Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ



## Ա. Ֆ. Մ Յ Ա Ս Ն Ի Կ Յ Ա Ն

(Կենսագրական տեղեկություններ)

Կուսակցական կազմակերպիչ, գրականագետ և խորհրդային դործիչ Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մյասնիկյանը (գրական անունը՝ Ալ. Մարտունի, կուսակցական մականունը՝ Ալյոշա) ծնվել է 1886 թ. փետրվարի 9-ին (ն. տ.) Նոր-Նախիջևան քաղաքում՝ հայ քաղքենի ընտանիքում։ Նա շատ վաղ զրկվեց իր հորից։ Ընտանիքը մնաց առանց ապրուստի միջոցների։ Մինչև ութ տարեկան հասակը նրան պահեց մայրը, վոր մի նահապետական հայ կին էր։ Ընտանիքում կային ուրիշ յերեխաներ ել—յեղբայրներ ու քույրեր։

Ութ տարեկան մանուկ Ալեքսանդրը հանձնվում է ս. Սաչ վանքի (Նոր-Նախիջևանի մոտ) յեկեղեցական-ծխական դպրոցը, ուր սովորում է մինչև 12 տարեկան հասակը։ Դասավանդությունը, համենայն դեպս, այն ժամանակվա բեալական դպրոցների ծրագիրը չուներ։ Մինչև դպրոց մտնելը նա հայերեն չգիտեր. խոսում էր Նոր-Նախիջևանի բարբառով և ուսերեն։ Ծխական դպրոցն ավարտելուց հետո նա մտավ Նոր-Նախիջևանի թեմական դպրոցը, վորի վեց դասարանը ավարտեց 1903 թվին։ Դպրոցի դասավանդությունը աշխարհիկ բնույթ ուներ՝ դասականի հակումով։ Մեծ ուշադրություն էր դարձնում, գլխավորապես, հայոց և ուսաց գրականության և ուսական կուլտուրայի պատմության։

Ա. Մյասնիկյանը շատ վաղ սկսեց ապրել ինքնուրույն կյանքով. 16 տարեկան հասակում իր ապրուստը հոգում էր դասերով։ 15 տարեկան մտնում է աշակերտական անլեզալ և կիսալեզալ, կուլտուրական և հեղափոխական բնույթ ունեցող խմբակների մեջ։ Հրատարակում է աշակերտական անլեզալ ձեռագիր թերթ. 1904 թվին մտնում է Լազարյան ճեմարանի յոթերորդ դասարանը և դասընթացը վերջացնում է 1906 թվին։ Այդ թվերին նա մասնակցում է դպրոցական հեղափոխական շարժմանը։ Դեռ 1904 թվի յերկրորդ կեսին, ուսական դեպքերի ազդեցությամբ, մտնում է Ռուսաստ. սոց.-դեմ. կուսակցության շարքերը Ռոստովի ճյուղի միջոցով, մինչ այդ կարճ ժամանակով (մի քանի ամիս) յենթարկվելով հայ հեղափոխական ազգային հովերի ազդեցության։

1905 թիվը նրան կլանում և ամբողջովին: Այդ նշանավոր դարաշրջանը իր լիակատար կնիքն է դնում Մյասնիկյանի վրա: 1905 թվի վերջերը, նա տոգորվում է սոց.-դեմոկրատիայի գաղափարներով, իսկ 1906 թ. ձևակերպվում է վորպես սոց.-դեմոկրատ և նույն թվի ամառը Ռոստովի կազմակերպության միջոցով մտնում է Ռուսաստանի սոց.-դեմ. կուսակցության շարքերը: 1906 թվի ամբողջ ամառը աշխատում է Ռոստովի բանվորական խմբակներում: Այնուհետև Մյասնիկյանի համար սկսվում են ուսանողության և հեղափոխական աշխատանքի տարիները: Այդ տարիները լի յեն ուսանողական անընդհատ անկարգություններով, գործադուլներով և ցույցերով, վորոնց նա ցույց և տալիս գործոն մասնակցություն: Այդ տարիները նա դրադվում է նաև մարքսիստական կրթությամբ: Նա հեղափոխական մարքսիզմը ուսումնասիրում է սկզբնադրյուններով և Պլեխանովի (փիլիսոփայություն), Լենինի (փիլիսոփայություն, տակտիկա և կուսակցական կազմակերպություն) և Կաուցկու (եկոնոմիկա) աշխատություններով: Հեղափոխության պարտությունից և խուզարկությունից ու ձերբակալությունից հետո 1906 թվին նա Մոսկվայից անցնում է Անդրկովկաս: 1906 թվի յերկրորդ կեսին ընկնում է Բագու և սոց.-դեմ. շրջանը մտած՝ սկսում է այնտեղ ընդհատակյա աշխատանք: Մյասնիկյանի աշխատանքը Բագվում տևում է յերկու տարի: Նա աշխատանք է տանում սոց.-դեմ. հայ կազմակերպության շարքերում և միաժամանակ Ռ. Ս.-Դ. կուսակցության Բագվի բայլընիկյան կազմակերպության մեջ, յենթարկվելով ցարական մի շարք հետապնդումներին:

1909—1911 թ. թ. ընկ. Մյասնիկյանը նորից Մոսկվայում է: Այդ տարիները անցնում են ինչպես ակադեմիական զբաղմունքների, նույնպես և սոց.-դեմ. ուսանողական և այլ խմբակների աշխատանքի մեջ: 1911 թվին ավարտում է Մոսկվայի համալսարանի իրավագիտական ֆակուլտետը: 1911—12 թ. թ. Մյասնիկյանը զորակոչի յենթարկվելով՝ ղինվորական ծառայություն և կատարում: 1912—14 թ. թ. Մոսկվայում վարում է լեզալ կյանք, յերդվյալ-հավատարմատարի քաղցած ոգնական, սոց.-դեմոկրատական դասախոս և գրականագետ: 1914 թվի ամառը մեկնում է Կովկաս աշխատելու, բայց դեռ Նոր-Նախիջևանում վրա է հասնում պատերազմի և զորահավաքի հայտարարությունը: Վորպես ղինապարտ Մյասնիկյանն ընկնում է բանակ՝ սկզբում խոր թիկունքը, շուտով ել ռազմաճակատ, ուր մնում է մինչև փետրվարյան հեղափոխությունը, ռազմաճակատում նա գտնվում է, ղլխավորապես, թիկունքային պահեստի զորամասերում, մասնակց

ցելով միայն ճակատային մի քանի փոքրիկ գործողություններին: Իր դորամասում ստեղծում է սոց.—դեմ. մի փոքրիկ խմբակ՝ պարտվողական տրամադրությամբ:

Փետրվարյան հեղափոխության սկզբից մինչև 1919 թվի գարունը Մյասնիկյանը ապրում է Արևմտյան Ռուսաստանում և Բելորուսիայում, տանելով, կուսակցության հանձնարարությամբ, պատասխանատու աշխատանքներ: Յեղել է արևմտյան ռազմաճակատի ճակատային կոմիտեյի անդամ և բայլշևիկյան ֆրակցիայի ղեկավար: Հոկտեմբերյան որբերին արեվմտյան ռազմաճակատի ճակատային 2-րդ համագումարը միաձայն ընտրում է նրան արեվմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար: Միաժամանակ փոխարինում է գերագույն հրամանատարին: Այնուհետև յեղել է արեվմտյան շրջանի ղինվոր. կոմիտար, Ռ. կոմ. կուսակց. Հյուսիս-արեվմտյան շրջանի կոմիտեյի նախագահ, Բելորուսիայի կոմ. կուսակց. կենտ. բյուրոյի նախագահ, Բելորուսիայի կենտգործկոմի նախագահ և այլն: Ի միջի այլոց, նրա անվան հետ է կապված Սմոլենսկի համալսարանի հիմնադրությունը: 1918 թվի գարնանը Մուրավյովից առաջ, նշանակվում է Վոլգայի շրջանի ռազմաճակատի հրամանատար ու մասնակցում է չեխո-սլովակների դեմ կատարվող գործողություններին:

1919-21 թ. թ. ընթացքում նա աշխատում է Մոսկվայում վորպես Ռ. Կ. Կ. (բայլ.) Մոսկ. կոմ. անդամ, վորպես Մոսկ. կոմիտեյի քարտուղար, Մոսկվայի խորհրդի նախագահության անդամ, վորպես ջրային տրանսպորտի քաղաք. գլխավոր վարչության պետ և Ցեկտրանի նախագահության անդամ, 1920 թվի ամառը կուսակցության կենտկոմի կողմից նշանակվում է արեվմտյան ռազմաճակատի՝ լեհական ճակատի, քաղվարչության պետ:

1921 թվին փոխադրվում է Հայաստան, Ժողկոմխորհի նախագահի պաշտոնով: 1922 թվից Մյասնիկյանը աշխատում է Թիֆլիսում. սկզբում վորպես Անդրկովկասի նորակազմ ֆեդերացիայի Դաշնակից Խորհրդի նախագահ, ապա վորպես ՌԿԿ (բ.) Անդրկովկասյան Ցերկրային կոմիտեյի քարտուղար: Խորհրդային գծով նա հանդիսանում է անդամ կովկասյան բանակի Հեղ. Խորհրդի, ՍՍՀՄ-ի Ռազմա-Հեղափոխ. խորհրդի և ՍՍՀՄ-ի Գործկոմի նախագահության:

Մյասնիկյանը խմբագրում էր «Заря Востока» լրագիրը. տարբեր ժամանակներ խմբագրել է Մոսկվայի «Коммунистический труд», Մինսկի «Звезда» և հայերեն «Խորհրդային Հայաստան»-ը: Աշխատակցել է «Պրավդա», «Իզվեստիա», «Գոլոսկ», «Экономич. жизнь» և այլ թերթերի: Ունի գրական շատ աշխատանքներ՝ ուղ-

սերեն և հայերեն, ինչպես և առանձին հրատարակություններ, այնպես Մոսկվայի, Կովկասի և արևմտյան (Բելորուսայի և այլ տեղերի) շատ պարբերականներում: Առանձին հրատարակություններ են՝ «Միք. Նալբանդյան», «Հովհաննես Թումանյանի պոեզիայի սոցիալական արժեքը» (հայերեն), «Կուսակցությունները գաղութահայության մեջ», «Ազգային հարցի մասին» (ռուսերեն և հայերեն), «Об эсерах», «Беспартийная конференция», «За партию» և ուրիշները (ռուսերեն): Նա աշխատակցել է ռուսական և անդրկովկասյան պարբերականներին, նաև Ամերիկայում և Բալկաններում լույս տեսնող կուսակցական հայ թերթերին:

1925 թ. մարտի 22-ին նա տակավին յերիտասարդ և յեռանդով լի խորտակվեց «Յունկերս» սովառնակի հետ, վորը հենց նոր թռած այրվեց ողի մեջ: Ըսկ. Մյասնիկյանը՝ ընկ. ընկ. Աթարբեկյանի և Մազիլևսկու հետ միասին գնում եր Սուխում՝ Աբխազիայի Խորհուրդների Համագումարին:

---

## ՌԿԿ ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ԿՈՉԸ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՍԲՈՂՋ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Մարտի 22-ին մեզնից հեռացած ընկ. Նարիմանովին հողին հանձնելու ժամին, Թիֆլիսի մոտ ողանավի մեքենայի պայթու- նից բոցավառվելով գետին ընկան ու մահացան մեր կուսակցա- կան ու բանվորագյուղացիական իշխանության շինարարության գործի ընկերներ Մյասնիկյանը, Աթարբեկյանը և Մագիլեսկին: Նրանց հետ միասին նույն յեղերական դեպքին զոհ գնացին ո- դաչու, կոմունիստական կուսակցության անդամության թեկնա- ծու, բանվորի գավակ և ինքն ել բանվոր Սագարաձեն, նմանա- պես Շպիլը՝ Գերմանիայի լավագույն ղինվորական ոդաչուներից մեկը:

Բնության տարերքի կույր ուժերի ճակատագրական պա- տահականության զոհ գնացին աշխատավորության դասակարգա- յին ու ազգային ազատագրման համար մարտնչող յերեք լավա- գույն մարտիկները:

Մեր կուսակցության և Անդրկովկասի խորհրդային իշխա- նության շինարարների շարքերից խլվեցին յերեք խոշորագույն գործիչներ, վորոնց կյանքն ու գործունեյությունն այնքան հար- կավոր են, այնքան անհրաժեշտ հենց այժմ, յերբ մեր հանրապե- տությունների բանվորներն ու գյուղացիները դիմել են արդեն ժողովրդական, տնտեսական ու ազգային կուլտուրական կյանքի նոր ձևերի որգանական կառուցմանը:

Իր ուղմական դիրքում այլևս կանգնած չե ընկեր Մյասնի- կյանը: Անհողդողդ լենինյանների շարքում չե այլևս մեր Ալյո- շան, հին բայլընիկը, վոր այնքան անխոնջ յեռանդով ու այնպի- սի հաստատակամությամբ կրում եր պրոլետարական դիկտատու- րայի դրոշակը գաղտնի գործունեյության շրջանից դուրս գա- լուց հետո: Ռազմական աշխատանք Արևմտյան ճակատում, խրա- մադներում, խորհրդային իշխանության գաղափարների հասու- նացման շրջանում, կուսակցական պատասխանատու աշխատանք մեր կուսակցության Մոսկվայի կազմակերպության քարտուղարի

պաշտօնում, որգանական խորհրդային շինարարություն դաշնակներին ազատագրված Հայաստանում, Անդրկովկասի ժողովուրդներին յեղբայրության, Անդրկովկասյան Ֆեդերացիան ստեղծելու և Դաշնակցային Խորհրդի առաջին նախագահներից մեկի պաշտօնում կատարած անխոնջ աշխատանքներ և, վերջապես՝ յերկու տարվա ընթացքում կատարած յեռանդուն քարտուղարական աշխատանքն անդրկովկասյան կազմակերպության ղեկավար մարմնի մեջ,— ահա թե վորոնք են ընկ. Մյասնիկյանի կուսակցական, ռազմահեղափոխական և խորհրդային հսկայական աշխատանքները:

Մարքսիզմի բնագավառում ունեցած հիմնավոր գիտությունն ու ծանոթությունը, վոր լրացվում էր ամենայն ուր, կոմունիստական լայն աշխարհայացքը, վոր միանգամայն բացասում էր նեղմտությունն ու աղանդավորությունը, հերթական խնդրի վրա կենտրոնանալու ընդունակ հուժկու կամքը՝ Մյասնիկյանին դարձնում էին բանվորագյուղացիական մասսաների իսկական ղեկավարը:

Լենինյան դպրոցի լավագույն աշակերտներից մեկը լինելով, աղգային հարցում Մյասնիկյանը Խորհրդային Հայաստանի ամենալավ հրապարակախոսներից էր: Նրա քննադատության սուրը շարունակ յետ էր մղում արտասահմանյան վարձկան հակահեղափոխականներին՝ նոր վոտքի կանգնող բանվորագյուղացիական Հայաստանի վրա գործվող հարձակումները:

Ընկ. Մյասնիկյանի մահը մի ծանր, կսկծալի հարված է լենինյան բանակի շարքերին, նոր կյանքը դարբնողների շարքերին:

Զգալի հարված է մեր կուսակցության համար ընկ. Աթարբեկյանի կորուստը: Աշխատավորության թշնամիների անհաշտ թշնամին, վոր այնքան անձնվիրաբար մարտնչում էր հակահեղափոխության դեմ Հյուսիսային Կովկասում և Հայաստանում: Աթարբեկյանը խոշոր կազմակերպիչն էր վոչ միայն գաղտնաբար գործող հակահեղափոխականների դավերի դեմ մաքառելու գործում, նա կուսակցության և խորհրդային կառավարության համար լավագույն «հարվածողն» էր նույնպես պետական ու տնտեսական աշխատանքի մյուս բոլոր ասպարեզներում:

Յեթե մի վորևե նոր գործ հարկավոր էր առաջ մղել մաքսիմալ, յերբեմն անհնարին արագությամբ, կուսակցությունը միշտ նկատի յեր առնում Աթարբեկյանին: Յեթե խորհրդային ասպարատի մի վորևե հիվանդոտ կետում պահանջվում էր արագություն, ճկունություն ու թափ, կուսակցությունն այնտեղ էր ուղղում Աթարբեկյանին: Նրա անհաշտ ատելությունը դեպի աշխատավոր-

րության պատմական թշնամիները, շանթահար յեռանդը և բյուրեղային աղնվությունն այդ որինակելի բանվորա-գյուղացիական տեսչի ու ժողկապի կազմակերպչի հիմնական հատկանիշներն եյին:

Կուսակցութեան և հեղափոխութեան համար ծանր ե ընկ. Մագիլեսկու կորուստը: Հին բայլընիկ եր, ընկեր Մյասնիկյանի գինակիցն Արեմտյան ճակատում, Համառուսական Արտակարգ Հանձնաժողովի խոշոր աշխատակից, վորն առաջին անգամ Անդրկովկաս յեկավ Ճենովայի կոնֆերենցիայի գումարումից առաջ՝ մեր դիմադրական ունակությունը հետազոտող հանձնաժողովի անդամի պաշտոնով: Այդ որվանից նա ղեկավարում եր անդրկովկասյան հակահեղափոխութեան դեմ պայքարող որդանը: Բացարձակ կուսակցական, կոմկուսի ազգային քաղաքականությունը լավ ըմբռնած աղնիվ աշխատավոր եր:

Մագիլեսկին վերջերս լծվում եր տնտեսական աշխատանքների, ձգտելով կապել կենտրոնական տրեստների ու սինդիկատների գործունեյությունն անդրկովկասյան տնտեսութեան կարիքների ու պահանջների հետ: Նրա որհասական վերջին թռիչքն արդյունքն եր այն անհամբեր ցանկութեանը, վորը նա ունեւր Աբխազիայի տնտեսական հնարավորություններին տեղնուտեղը ծանոթանալու համար: Բայց նրան այդ չհաջողվեց, և նա ընկերներ Մյասնիկյանի և Աթարբեկյանի հետ միասին մահացավ:

Մեծ ե մեր կուսակցութեան կորուստը: Բայց այս կորուստը չի անդրադառնա Լենինյան կուսակցութեան աշխատանքի ու պայքարի վրա. նա կրկնապատիկ յեռանդով կշարունակի իր աշխատանքը, մի աշխատանք, վորն ուղղված ե խորհրդային հանրապետությունների տնտեսական շինարարութեանը, հիմք ունենալով մի կողմից քաղաքի ու գյուղի սերտ մերձեցումը և, մյուս կողմից՝ ազգությունների կուռ միությունը:

Մահացած մեր ընկերների պերեզմանի վրա լավագույն հուշարձանը կլինի մեր կուսակցութեան նորանոր հաջողություններն այն աշխատանքների ասպարիզում, վորոնց նվիրել եյին նրանք իրենց կյանքը, վորոնց ասպարիզում մեր ընկերներ Մյասնիկյանը, Աթարբեկյանն ու Մագիլեսկին այնքան շատ բան կարողացան անել:

ՌԿԿ ԱՆԴՐՅԵՐԿԻՆՍԿԻՍ

## Հ Ր Ա Մ Ա Ն

Կովկասյան Կարմրադրոշ Բանակին

Այսօր մենք հողին ենք հանձնում ընկ. Մյասնիկյանի մարմինը, վորը կորավ սավառնակի աղետի ժամանակ, վորով ընկեր Մյասնիկյանը մեկնել էր, վորպես Անդրկովկասյան կառավարութեան ներկայացուցիչ, Սուխում՝ Արխաղիայի Խորհուրդների համագումարին մասնակցելու համար: Նրա հետ միատեղ մենք թաղում ենք նրա վիճակին արժանանած ընկերներներ Աթարբեկյանին, Մազիլևսկուն և յերկու ողաշու ընկերներ՝ Շալիլին և Սադարաձեյին:

Ընկ. Մյասնիկյանը Կոմունիստական Կուսակցութեան խոշորագույն աշխատավորներից էր: Կուսակցութեան Անդր. Յերկ. Կոմիտեյի քարտուղար, ՍԽՀՄ ԿԳԿ-ի պրիզիդիումի անդամ, Անդրկովկասի Հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ, ՍԽՀՄ Ռազմա-հեղափոխական Խորհրդի անդամ և Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Ռազմա-հեղափոխական Խորհրդի անդամ,— ահա այն պատասխանատու պաշտոնները, վորը գրավել էր ընկեր Մյասնիկյանը և վորտեղ արդունավոր կերպով աշխատում էր բանվորա-գյուղացիական պետութեան ամրապնդման գործի համար:

Խոշորագույն աշխատանք էր վարում հանգուցյալ ընկեր Մյասնիկյանը Կարմիր Գվարդիայում և Կարմիր Բանակում նրանց կազմակերպութեան առաջին մոմենտներից սկսած: Կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան հրամանով, ընկ. Մյասնիկյանը գրավում էր մի շարք պատասխանատու պաշտոններ Կարմիր Բանակում սպիտակ գվարդիականների ու ինտերվենցիայի դեմ յեղած պայքարի ծանր օրերին և միշտ ել պատվով էր կատարում իր վրա դրված խնդիրները:

Խոնարհեցնելով մեր դրոշակները ի հիշատակ ընկած ընկերների, կարմիր զինվորականի յերդում տանք, վոր հաստատուն կրկանգնենք մեր դիրքերում պաշտպանելու Խորհրդային Հանրապետութեան Միութեանը և յեթե հարկ լինի մեր կյանքը կդնենք աշխատավորների բարորութեան համար:

Բանակի հրամանատար՝ ԿՈՐԿ, Ռազմա-հեղափոխական Խորհրդի անդամներ՝ ՈՐՋՈՆԻԿԻՉԵ, ԿԱՐԱՅԵՎ, ԵՂԻՍՎԱ, ՌԱՏՆԵԿ.

# ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՄԱՅՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՏՐՈՑԿՈՒ ՃԱՌԻՑ

(արտասանած Սուխումի քաղաքային խորհրդի նիստին)

Մյասնիկյանը հին, մարդաված ընդհատակյա կուսակցական էր. հենց յերեք որ առաջ յես առիթ ունեցա խոսելու նրա մասին, վորպես յեռանդուն և գործուն ընկերոջ, վոր այս որերս գալու էր Սուխում: Կասպարովան հիշեց ընդհատակյա աշխատանքը Բագվում և լարված յեռանդը այդ ընդհատակյա հեղափոխական-բայլ-շեխի, վորը ուսակցիայի, քայքայման և լիկվիդատորության ամենածանր տարիներին իր համար նվաստ բան չեր համարում մինչև անգամ առտնին աշխատանքը, վոր ավագ սերնդի լավագույն մարտիկները, ատամները սեղմած, կատարում էին այն ժամանակ, հատակի տակ կարմիր Հոկտեմբերը պատրաստելով:

Թե Հոկտեմբերին, թե Հոկտեմբերից հետո Մյասնիկյանը հավատարիմ է մնում իրեն: Հիշում էմ, թե ինչպես այն մոմենտին, յերբ չեխ-սլովակյան ապստամբությունը դարձավ լուրջ վտանգ, Յակով Միխայլովիչ Սվերդլովը ասաց. «պետք է Մյասնիկյանին կանչել Սմոլենսկից»: Կանչեցին: Այն ժամանակ յես նրան տեսա առաջին անգամ: Այն ժամանակ նա ավելի ջահել էր յերևում, քան վերջին տարիները: Պայքարի և փորձության այս յոթ տարիները շատերի վրա դրել են իրենց անջնջելի կնիքը: Այն ժամանակ Մյասնիկյանը ուներ պատանեկական ինչ-վոր բան: Ինչպես այժմ, հիշում էմ նրա առաջին հայացքը, վոր նայում էր գրեթե հոնքերի տակից: Այդ հայացքը միաժամանակ հեղափոխականի պարզ և սուր հայացք էր, հեղափոխականի, վոր կուսակցության առաջին իսկ կոչին, ամենադժվար մոմենտին լուելյան ասում է. «Յես պատրաստ եմ»:

Դրանք ծանր որեր և ժամեր էին: Կռիվներում, կրակի մեջ, չեխ-սլովակների և սպիտակների հարվածների ներքո կազմավորվեցին կարմիր բանակի առաջին գնդերը: Մյասնիկյանը առաջին-

ներից և լավագույններից մեկն եր այն կազմակերպողներից: Ռազմական աշխատանքի մեջ, ինչպես և ամեն մի ուրիշ աշխատանքի մեջ, նա ցույց եր տալիս ինքնուրույնութուն, քննադատական հայացք և նախաձեռնութուն:

Ապա նրան փոխադրեցին Մոսկվա, վորպես Մոսկվայի կոմիտեյի քարտուղար, այսինքն վորպես կուսակցական կազմակերպության ղեկավար մեր Միութեան սրտում՝ քաղաքացիական կռիւի ամենածանր որերին: Այն ժամանակ կուսակցական կազմակերպության կյանքը, հետևաբար և քարտուղարի աշխատանքը նվիրված եր, գլխավորապես, այն բանին, վոր կուսակցութեան, պրոֆմիութեան մեջ և զանազան մարմիններում յեղած կոմունիստներից ընտրեն լավագույն, ավելի անվախ, ավելի անձնագոհ մտրդիկ քաղաքացիական կռիւի ճակատների համար:

Ավելի հետո Մյասնիկյանը աշխատում եր տրանսպորտի վրա—յերկաթուղիների քայքայված ժամանակ, յերբ մեր վիճակը և ամենից առաջ լեհական ռազմաճակատի վիճակը կախված եր այն բանից, թե վորքան մենք ընդունակ կլինենք Վոլգայից և Սիբիրից զորամասեր փոխադրել արևմտյան ճակատ: Մյասնիկյանը այստեղ ել կատարեց իր պարտքը մինչև վերջը, վորպես տրանսպորտի առողջացման ղեկավար աշխատավորներից մեկը:

Ընդհանրապես հազիւ թե լինի աշխատանքի մի ճյուղ, ուր նա ստեղծագործական մասնակցութուն ունեցած չլինի: Վերջին տարիները նա Անդր. Յերկր. կոմիտեյի քարտուղար եր: Դա ի՞նչ ե նըշանակում—պարզ ե առանց խոսքերի: Նա ղեկավարում եր կուսակցական կազմակերպութունը Անդրկովկասյան Ֆեդերացիայի, այդ վերին աստիճանի բարդ միութեան, վոր ունի ազգային խըճճված հարաբերութուններ, կուլտուրական խայտաբղետութուն, իշխանական ժառանգութուն անցյալից, և մեծագույն անելիքներ ապագայում: Նա այստեղ կանգնած եր վորպես կուսակցական մատորի սրատես մեխանիկ, վորը շարժման մեջ եր դնում խորհրդային մարմինների, արհմիութունների, կոոպերացիայի ատամնավոր անիվը և ուղղութուն եր տալիս ու վողի ներշնչում Անդրկովկասի տնտեսական և կուլտուրական կյանքին: Իր այս՝ առավել պատասխանատու աշխատանքը մինչև վերջին որը, մինչև վերջին շունչը տանում ե պատվով: Նա թռած-գալիս եր այստեղ՝ Արխադիա, խորհուրդների համագումարին, բայց, դժբաղդաբար, տեղ չհասավ:

ԸՆԿ. ՅԵՆՈՒԿԻՉԵ

Ալեքսանդր Մյասնիկյան:—Ո՞վ նրան չի ճանաչում Մոսկվայում, ո՞վ նրան չի ճանաչում Բելորուսիայում. նրան բոլորը գիտեցին մեր կուսակցութեան մեջ. Ալյոշային բառացի կերպով գիտեցին բոլորը և բոլորն ել անսահման կերպով սիրում էին նրան Անդրկովկասում:

Մոսկվայի կոմիտեյի նախկին քարտուղար, Ռկկ կկ-ի անդամ, Անդրկովկ. Յերկրային կոմիտեյի քարտուղար, խելոք, գիտուն, ականավոր գործիչ, լի ուժով ու յեռանդով, մեռավ այդպես յեղերորեն:

Մենք բոլորս, և սուսնձնապես Սերգոն, Մամիան և Սերյոժա կիրովը կորցրինք հանձինս Ալյոշայի, լավ, խոհուն, տաքտիքական, անփոխարինելի, թանգագին ընկերոջ ու բարեկամին:

Ինչպե՞ս նրանք բոլորը, սիրելով, հարգելով և բացարձակ կերպով հավատալով մեկը մյուսին, հեշտութեամբ, արագորեն և ճիշտ կերպով վճռում էին կուսակցական ու խորհրդային բոլոր դժվար և բարդ հարցերը: Կան մարդիկ, վորոնց հատկութեանները դժվար է պատկերացնել թղթի վրա—նրանց միայն կարելի յե գգալ: Յես անձամբ, հանձինս Ալյոշայի, կորցրի իմ մոտիկ բարեկամիս:

---

ԸՆԿ. ՈՐՉՈՆԻԿԻՉԵ

Հիշում եմ Ալյոշային, մեր կուսակցութեան 6-րդ համագումարին, մեր կադմակերպութեան հուլիսյան կատաստրոֆայից հետո Լենինգրադում, վորը զեկուցում եր արևմտյան ճակատի տրամադրութեաններին և մեր կադմակերպութեան դրութեան մասին: Վորքան ինքնավստահութուն, վորքան հավատ կար նրա զեկույցի մեջ մեր հաղթանակի վերաբերյալ: Հիշում եմ, ինչպես այսօր, արևմտյան ճակատի զին, պատգամավորներին խորհուրդներին համագումարի յերեկոյան նիստը 1917 թ. նոյեմբերին: ամբողջ համագումարը վոտքի յելած դիմավորում ե իր կողմից հենց նոր ընտրված ճակատի հեղափոխական հրամանատարին: Բեմի վրա յերևում ե հին մոխրագույն շինելի մեջ մեր թանգագին Ալյոշան:

Դահլիճը հիացմունքով վողջունում ե նրան: Սա նա յե, նոր հրամանատարը, վորին ծնել ե Հոկտեմբերյան հեղափոխութեանը, սա նա յե, վորը փոխարինում ե վոսկե ուսադիրներով զարդարված հին դեներալներին: Համագումարը աղմկահույզ ծափահարում ե իր հարագատ յեղբորը՝ հրամանատար Ալյոշային, վորը պետք

ե ղեկավարի բանակը չեխոսլավականների դեմ Վոլգայի վրա: Ալյոշան մեկն ե Բելոռուսիայի Սորհրդային Հանրապետութեան կազմակերպողներին և ղեկավարներին, Ալյոշան մեր կուսակցութեան Մոսկվայի կոմիտեյի քարտուղարը, և ապա ամբողջ չորս տարի Ալյոշան մեզ հետ ե Անդրկովկասյան աշխատանքներում, — սկըզբում Հայաստանում և ապա Թիֆլիսում: Այստեղ Ալյոշան հանդիսանում ե մեր կուսակցութեան հոգին, այստեղ նա ազգային հաշտութեան դրոշակակիրն ե, այստեղ նա մեր կուսակցութեան ղեկավարի պաշտոնումն ե, նա յե կազմակերպիչը Անդրկովկասի կոմունիստական Համալսարանի, նա յե ղեկավարը մեր մամուլի: Չկա մի անկյուն մեր կուսակցական խորհրդային աշխատանքների մեջ, վորտեղ Ալյոշան չլիներ: Վերջին ժամանակներս Ալյոշան ամենից շատ անհանգստանում եր մեր գյուղի, գյուղացիութեան մասին: Քանի անգամ նա բարեկամական գրույցի մեջ ասել ե. «Վատ ե դրութեանը գյուղում: Մինչև այժմ մենք զբաղված եյինք ազգային հաշտութեան սահմանելու և ամրապնդելու գործով, այժմ մեր աշխատանքի ծանրութեան կենտրոնը փոխադրենք գյուղը»:

Սակայն Ալյոշային չեր վիճակված ղեկավարելու այդ աշխատանքները:

Յերդվում ենք ածխացած Ալյոշայի առաջ, վոր Լենինյան կուսակցութեանը, վորին նա նվիրեց իր ամբողջ յեռանդն ու գիտութեանները, աղնվորեն և անձնվիրութեամբ կիրադործի մեր յերկրի տնտեսական վերածնութեան և բանվորների ու գյուղացիների միութեան ամրապնդման խնդիրները:

#### ԸՆԿ. ԼՈՒԿԱՇԻՆ

1921 թվի մայիսին Ալյոշան բերում ե Իլիչի նամակը ուղված Անդրկովկասի կոմունիստներին. այդ նամակում մեր կուսակցութեան առաջնորդը չորս տարի առաջ տվել եր հիմնական դիրեկտիվներ՝ ինչ և ինչպես պետք ե անել Անդրկովկասում: Այդ դիրեկտիվները մինչև որս ել գործադրելի յեն և ղեկավարում են մեզ: Շատ բան արված ե, բայց մեր առաջ կա ելի մեծ աշխատանք: Բայց Իլիչի և կուսակցութեան հիմնական ավանդներից մեկն իրականացված ե: Անդրկովկասյան ժողովուրդները յեղբայրաբար միացված են և հավաքված ի մի: Ազգային ատելութեան իրարանցումի փոխարեն, վոր այնպես վարպետորեն սարքում եյին Անդրկովկասի աշխատավորութեան թշնամիները, այսոր ամուր և

հաստատու կանգնած եւ աշխատավորներին այդ յեղբայրութեան կազմակերպութիւնը—Անդրկովկասի Խորհրդային Հանրապետութիւնը: Այլոշան Անդրկովկասի ժողովրդներին յեղբայրացման լավագուշն կազմակերպողներինց մեկն եւ:

Աշխատավորներին յեղբայրացման, համերաշխութեան համար մղվող կռիվը պահանջում եր և պահանջում եւ ուժեղ և հետևողական պայքար բոլոր տեսակի ազգայնականութեան ու շովինիզմի դեմ, վոր կար ու մնացել եւ մեզ վորպես ժառանգութիւն:

Այլոշան լավագուշն հռետորն եր Եզգայնականների դեմ մղվող կռիւում, մանավանդ հայկական ազգայնականութեան դեմ:

Մեր ծանոթութեան քսան և ավելի տարիներին ընթացքում, սկսած աշակերտական նստարանից, յես ունեցել եմ շատ դեպքեր հանդիպելու և միասին աշխատելու նրա հետ: Մի գիծ, մի հատկութիւն, վորն առանձնապես և բացառիկ աստիճանով նրան տարբերում եր իր մյուս ընկերներինց—դա նրա զարմանալի հավասարակշռութիւնն եր, սառնարյունութիւնը, կայունութիւնը, վորոնց տակ թագնւած եր ուժեղ, ամուր, ճկունութեան ու կենտրոնացման ընդունակ կամք դեպի կռիվը, դեպի բանվոր դասակարգի կռիվը:

#### ԸՆԿ. ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Այդ մարդը չկա այսօր: Սակայն նա պատկանում եւ այն սակավութիւլ պատմական դեմքերի շարքին, վորոնց անունը պարտավորացնում եւ սերունդներին: Նա պիտի շարունակի ապրել սերունդների գիտակցութեան մեջ, վորպես գաղափարական կենդանի դրոշ:

Այն, ինչ արեց նա, պատմական անցյալի սեփականութիւնն չեւ, այլ այրող, հրահրող այժմեականութիւնն:

Նրա անմիջական ղեկավարութեամբ ստեղծվեցին հիմնական նախադրյալներ, վորի վրա վերջին տարիներին ընթացքում, առանց իր անմիջական մասնակցութեան և ղեկավարութեան ծավալվեց Հայաստանի տնտեսական և կուլտուրական շինարարութեան գործը, Հայաստանի աշխատավորութեան նյութական վերածնունդը:

Այլոշա Մյասնիկյանը առաջինն եր, վոր բերեց Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդներին լենինի քաղաքական պատգամը, նա առաջիններինց եր, վոր ղեկավար ունեցավ իրեն այդ պատգամը Հայաստանում և Անդրկովկասում տարած աշխատանքի շրջանում: Նա և նրա հետ մեկտեղ այն ընկերները, վորոնք մենք

վերջին հրաժեշտի մեր խոսքն ենք ասում այսօր, բարձր պահեցին կուսակցութեան այն դրոշմը, վորի վրա գրված է Վլադիմիր Իլյիչ Լենինի անունը: Համախմբված այդ դրոշակի ներքո, անխաղած աճյունների առաջ, յերդվենք գնալ հեղափոխութեան այն ուղիով, վորով ընթացան ընկ. ընկ. Մյասնիկյանը, Աթարբեկյանը, Մագիլևսկին:

#### ԸՆԿ. Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բանվորա-գյուղացիական մասսան ե ծնել այն մարդկանց, վորոնք դասակարգային ամենադաժան պայքարների ահեղ ժամին հաղթանակելու այնքան անսպառ յեռանդ ե յերկաթե կամք են հայտնաբերել, այնքան խոր հավատ, նվիրածություն ե պատրաստակամություն՝ զոհաբերելու իրենց նրա շահերի համար:

Կապիտալիստական շահագործման ե իմպերիալիստական բռնութեան դեմ նրա մղած տարերային պայքարն ե առաջ մղել ընկ. Մյասնիկյանին, վորը դեռ եվս իր գիտակցական կյանքի արշալույսին նիշեց Հայաստանի աշխատավորութեան ազատագրման հիմնական խնդիրները, որյեկտիվ պայմանները ե անհրաժեշտ նախադրյալները, վորը հնի տապալման ե նորի ծնունդ առնելու քառսում, ամենահուսահատական մոմենտներին չկորցրեց Հայաստանի ու Անդրկովկասի աշխատավորների մասսայական շարժման վոչ հեռանկարների, վոչ կոնկրետ ետապների ու առանձին խնդիրների պարզ գիտակցությունը:

#### ԸՆԿ. Ս. ԽԱՆՈՅԱՆ

Ամենախոշոր ու պատմական դերը, վոր կատարել ե ընկեր Ալյոշան—այդպես ենք անվանում նրան ընկերական շրջաններում—Անդրկովկասի իրականութեան մեջ, այդ մեր անքակտելի Ֆեդերացիայի գաղափարն ե, վոր այսօր արդեն իրական փաստ ե ե նշանակալից իրողություն Անդրկովկասի աշխատավորութեան համար:

Բայց սոսկ այդ չե նրա կատարած դործը: Բազմադան են ու բազմապիսի այն քաղաքական-հոսարական պրոբլեմները, վոր վճռվել են նրա անմիջական մասնակցութեամբ, նրա սառն, խոհուն ու խոհեմ, հեռատես ու լուրջ մոտեցումով այդ հարցերին:

Կուսակցությունը նուրբ քաղաքականութեան հետ այն ունեւերն եյին, վորոնցով ընթացել ե նրա գործունեյությունը Անդր-

կովկասում:

Մասնավորապես Հայաստանի ժողովրդական կոմիտեաների Սորհրդի նախագահ յեղած միջոցին իր բնավորութեան մեղմութեամբ, ընկերական ջերմ վերաբերմունքով դեպի շրջապատողները նա կարողացավ ստեղծել մի միաձուլ, անշեղ ու ժամանակի, իրականութեան համապատասխան կառավարութիւն:

Մյաննիկյանի շրջանի Հայաստանը իր շինարարութեան առաջին տարիներում փայլուն եջ և հանդիսանալու Սորհրդային Հայաստանի պատմութեան մեջ:

Այն ժողովրդականութիւնը, վոր վայելում եր ընկ. Մյաննիկյանը Հայաստանի աշխատավորութեան լայն մասսաներում, ինքեան գրավականն և՛ նրա դեպի ռազպարն ու շարքաշ գյուղացին ունեցած սիրո ջերմ վերաբերմունքի:

ԸՆԿ. Պ. ՄԱԿԻՆՅՅԱՆ

Ալեքսանդր Ֆեոդորովիչը դարձավ մեծութիւն վոչ միայն անդրկովկասյան, այլ և համամիութեան ծավալով, բայց նա և՛ ր, և մնաց անխղելի կապված հայկական իրականութեան հետ: Իբրև հրապարակախոս և սոցիոլոգ, նա կգրավե ամենապատվավոր տեղ հայկական նոր գրականութեան մեջ: Իսկապես նրա անվան հետ կը կապվի հոյ մասսաների հոգեբանութեան մեջ կատարված արմատական հեղաշրջումը: Հայաստանի խորհուրդների առաջին համագումարում նա, վորպեսզի ընդգծե խորհրդային իշխանութեան հաստատմամբ սկսվող նոր դարաշրջանի տարբերութիւնը, անվանեց նախկին դարաշրջանը Սհարոնյանի պիլեսներից մեկի վերնագրով—«Արցունքի հովիտ»:

—Մենք, ասաց ընկ. Ալյոշան, պետք և այդ հովիտը ցամաքացնենք արցունքներից և հեծկլտանքներից, առույգ ձեռնարկենք աշխատանքի, խորհրդային շինարարութեան, վորպեսզի այդ հովտում հաստատվի բանվորների և գյուղացիների կայուն ու պայծառ թագավորութիւն:

Վերջերս Յերեվանում վերջացավ Հայաստանի 4-րդ համագումարը: Կուսակցական խորհրդային ապարատներն արդեն բավական առաջ են շարժել յերկիրը: Յեվ այսոր Հայաստանի աշխատավոր մասսաները կարող են հպարտութեամբ ասել, թե աշխատանքը կատարվում և, թե Հայաստանի վերածնունդը—կատարված փաստ և:

Ընկ. Ալյոշայի պայծառ գերեզմանի վրա մենք ամենքս—

յերեվանցիներ, բազուցիներ, թիֆլիսցիներ, մոսկովցիներ—կարող ենք զսպել արցունքները հաստատուն վճռականությամբ՝ ընդհանուր ջանքերով զարգացնելու ու շարունակելու այն ամբողջ աշխատանքը, վորի համար ապրում եր ընկ. Ալյոշան:

#### ԸՆԿ. ՄՌԱՎՅԱՆ

1921 թվի մայիսից Հայաստանի պատմության մի նոր եջ ե սկսվում, փառավոր մի շրջան: Խորհրդային-քաղաքական շինարարության շրջանն եր այդ, հարևան ժողովուրդների հետ հաստատուն, խաղաղ, դրացիական հարաբերություններ ամրացնելու անմոռանալի տարին:

Ընկ. Լենինը 1921 թ. ապրիլի 14-ի իր պատմական նամակում տվել եր այն դիրեկտիվները, վորով պիտի առաջնորդվեյին կուսակցությունն ու կառավարությունը կովկասում, մասնավորապես Հայաստանում:

Ընկ. Լենինի այս դիրեկտիվներով սկսվեց Խորհրդային իշխանության աշխատանքը Հայաստանում ընկ. Մյասնիկյանի ղեկավարությամբ:

Յեռուն քաղաքական կազմակերպչական աշխատանքի մի շրջան եր այդ, վորի արժանավոր ղեկավարն եր ընկ. Մյասնիկյանը: Նրա ուժեղ ձեռքերում կառավարության մատորն անշեղ, կանոնավոր եր գործում: Ազգային խորհրդային հանրապետության ձևակերպումը կատարվեց ամենայն կատարելությամբ: Սկսվեց հանրապետության տնտեսական վերելքի կանոնավոր ընթացքը, վոր հիմնված եր գյուղացիության տնտեսականի բարձրացման և յերկրի բնական հարստությունների ազատագրման ու արդյունաբերության պատվանդանի վրա:

Բառի իսկական մտքով սկսվեց Հայաստանի աշխատավորության և նրա հանրապետության նոր պատմությունը:

Նոր կյանքի, նոր սոցիալիստական աշխատանքի մտած Խորհրդային Հայաստանն իր ձևավորման հետագա աստիճանն ունեցավ՝ մտնելով նախ Անդրկովկասի ֆեդերացիայի (նրա հիմնադիրներից մեկն եր Ալ. Մյասնիկյանը) և ապա Խորհրդային Միության մեջ՝ իբրև դաշնակցային հանրապետություն: Այս բոլոր ակտերը կապված են նոր Հայաստանի մեծ զավակ ընկ. Մյասնիկյանի անվան հետ:

Հրաժեշտի վողջույն ընկած կոմունիստներին:

Հեղափոխական հավերժ հիշատակ նրանց պայծառ անվանը:

ԸՆԿ. ԱՂԱՄԱԼԻ-ՈՂԼԻ

Ընկ. Մյասնիկյանի՝ իբրև անձնավորութեան՝ նշանակութեամբ յուսն Անդրկովկասի ժողովուրդներու միաբանութեան ու Ֆեդերացիայի ամրապնդման համար—ահագին եր: Իբրև հայ ակա-նավոր հեղափոխականներից մեկը, նա ունեւր անհրաժեշտ հատ-կութեանները՝ Անդրկովկասում ազգային խաղաղութեան ստեղ-ծելու դժվարին խնդիրը կյանքի մեջ գործադրելու համար: Ա-ռանձնապես զգայուն և ուշադիր եր վերաբերվում ընկ. Մյաս-նիկյանը միացյալ հանրապետութեանների ազգային կարիքներին: Մասնավորապես նա հետաքրքրվում եր Ադրբեջանի կուլտուր-կրթական աշխատանքի կարևորագույն հարցով:

ԸՆԿ. ԿԱՐԱՅԵՎ

Ինչպես գնահատել մեր այդ մեծ կորուստի նշանակութեան-նը: Մարդկային լեզուն չափազանց աղքատ ե, վոր կարողանա արտահայտել թեկուզ աննշան մասը Անդրկովկասի աշխատա-վորների վշտի:

Անգնահատելի յե ընկ. Ալյոշայի աշխատանքն Անդրկովկասի աշխատավորներին միացնելու ասպարեզում: Նա Անդրկովկասի Ֆեդերացիայի գլխավոր դրոշակակիրներից մեկն եր: Նա Լենինի հին փորձված աշակերտներից մեկն եր: Նա գեղեցիկ կերպով կա-րողանում եր իրականացնել Լենինի գաղափարները բազմազ-գյա Անդրկովկասում: Նա մեկն եր Անդրկովկասի Ֆեդերացիայի պարագլուխներից, վոր իր խելացի աշխատանքով ամրապնդեց ազգային խաղաղութեանն Անդրկովկասում: Չկա այլևս խոշոր կազմակերպիչ, տնտեսագետ, կուսակցական աշխատավոր և լա-վագույն ընկեր Ալեքսանդր Ֆյոդորովիչը:

ԸՆԿ. ԵՖԵՆԴՅԵՎ

Հանձին Մյասնիկյանի՝ շատ բան ե կորցնում վոչ միայն Ան-դրկովկասը, այլ և ամբողջ Միութեանը, ամբողջ կուսակցութեան-նը: Իզուր տեղը չեր նա կրում միաժամանակ Անդրկ. Յերկ. Կո-միտեյի քարտուղարի, ՌԿԿ ԿԿ թեկնածուի և Հանրապետութեան Ռազմահեղափոխական Խորհրդի անդամի կոչումը:

Կուսակցութեան Մոսկվայի Կոմիտեյի աչքի ընկնող աշխա-տավոր, հին բայլըսիկ և կնուսյանի գործակից, նա առաջին տա-

ըիները՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ անցկացրեց զորա-  
ճակատներում: Նրա ամբողջ աչքի ընկնող գործունեությունն  
անցավ մեր աչքերի առաջ:

ԱՌՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Մենք միասին ենք անցկացնում մեր մեծ կորուստների սգի  
վշտալի որերը: Ավելի սերտ կսեղմենք շարքերը և բարձր կպա-  
հենք հեղափոխության ու յեղբայրության դրոշակը, վոր համառ  
կերպով տանում եր իր ուսերի վրա հանգուցյալ ընկ. Մյասնի-  
կյանը:

ՍԽՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ՍԽՀՄ Կենտգործկոմի նախագահությունը խորապես ցընց-  
ված թանկագին ընկերներ և բարեկամներ Մյասնիկյանի, Մազի-  
լևսկու և Աթարբեկովի կորստով, ձեզ հետ միասին վշտակից ե  
Անդրկովկասի ժողովուրդների ընդհանուր վշտին—կուսակցական  
և խորհրդային ընտանիքից նրանց կորսնցնելու առիթով, և խըն-  
դրում ե պսակ դնել ընկածների ընդհանուր գերեզմանի վրա  
ՍԽՀՄ Կենտգործկոմի անունից:

ՍԽՀՄ Կենտգործկոմի քարտուղար՝ ՅԵՆՈՒԿԻՉԵ

ՌԱԶՄԱ.-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ՄՈՍԿՎԱ, 23 մարտի.—Մարտի 22-ին Թիֆլիսից սավանա-  
կով թռան ՌԿԿ Անդրկովկասի Յերկրային Կոմիտեյի պատասխա-  
նատու քարտուղար և Ռազմահեղափոխական Խորհրդի անդամ  
Մյասնիկյանը յերկու պատասխանատու գործիչների հետ և մա-  
հացու կերպով ջարդվեցին:

Կարմիր Բանակը խորը վշտով ե ընդունում այս լուրը: Մյաս-  
նիկյանը հին բայլընկ ե—լենինական, իր ուժերի մեծ մասը նվի-  
րել ե Կարմիր Գվարդիայի և Կարմիր Բանակի շինարարությանը:  
Քաղաքացիական կովի ժամանակ Մյասնիկյանը, վորպես զանա-  
զան բանակների և ճակատների Ռազմահեղափոխական Խորհրդի  
անդամ, անմիջականորեն մասնակցում եր նրա հաղթանակներում  
թշնամիների վրա:

Մյասնիկյանի անունը հեղափոխության սխրագործության  
որինակը պիտի ծառայի Ռ. Կարմրադրոշ Կարմիր Բանակի յու-  
րաքանչյուր զորականի համար:

Ընկած մարտիկի պանծալի հիշատակը հավերժացնելու համար Ռազմահեղափոխական Խորհուրդը վորոշեց Արևմտյան հետևակ զինվորական դպրոցին, ինչպես և ողաչուների առաջին զինվորական դպրոցին Մյասնիկյանի անունը տալ:

ՍԽՀՄ Ռազմահեղափոխական Խորհրդի նախագահ՝ ՅՐՈՒՆՉԵ

### ԲԵԼՈՐՈՒՍՅԻԱՅԻ ԿՈՄԿՈՒՍԻՑ

Բելորուսիայի կոմկուսի և աշխատավորների անունից հայտնում ենք ձեզ մեր խորին ցավակցությունն ընկերներ Մյասնիկյանի, Մազիլևսկու և Աթարբեկովի վողբերգական մահվան առիթով:

Ընկեր Մյասնիկյանի կորուստը առանձնապես ցավ է պատճառում վոչ միայն ձեր, այլ և մեր սրտին:

Ընկ. Մյասնիկյանի անունը, վորպես Բելորուսիայի կոմկուսը հիմնողներից և Խորհրդային Բելորուսիան կառուցողներից մեկի, կմնա ընդմիշտ Բելորուսիայի աշխատավորների հիշողության մեջ:

Հավերժ հիշատակ կոմունիզմի գործի համար ընկած մարտիկներին:

## ԱԼ. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄՏՔԵՐԸ

(Հայ հասարակական մտքի պատմութեան շուրջ)

«Հայ բուրժուազիան յերևան գալու հենց առաջին որից տեսնում ե իր հանդեպ հայ կղերին. նա ամրացնելու եր իր նյութական կարողութեան հիմքերը այն բոլոր միջոցներով, վոր հայ կյանքում դեր են կատարում, և այն տարրերին, վորոնք հակառակում եյին նրա ձգտումներին, նա սպառնալիք եր կարողում ու բուռնցք եր ցույց տալիս: Այդպես ե ամրանում հայ բուրժուազիան, այդ ճանապարհով ե նա ստեղծում իր քաղաքականութեանը, առաջ ե գալիս հայ բուրժուազիայի իդեոլոգիան, հակադրված հայի պահպանողականութեան:

«Հայ ժողովուրդը բաժանված եր յերկու խոշոր հատվածների, Ռուսաստանը՝ Կովկասը հայութեան տնտեսական առաջադիմութեան համար թե՛ նյութական և թե՛ մտավոր գործոնների տեսակետից ավելի մեծ հարմարութեաններ եր ներկայացնում, քան Տաճկաստանը. բացի այդ, վոր գլխավորրն ե, հայ բուրժուազիան առաջացել ու զարգանում եր Կովկասյան հողի վրա: Նա նախատեսնում եր իր ապագան, և վորքան փառավոր կլիներ այդ ապագան, յեթե հայ բուրժուազիայի առաջ կանգնած լինեյին խոշոր շուկա, ժողովրդի լայնածավալ խավերը, մի խոսքով, յեթե ազգութեան յերկու հատվածները մի միացած ամբողջութեան կազմեյին: Նրան ավելանում են մի շարք պատմական, ընդհանուր կուլտուրական պայմաններ, վերջապես՝ հայերի աննախանձելի վիճակը Տաճկաստանում և Ռուսաստանի հանդեպ գալը, վորպես պաշտպան տաճկահպատակ քրիստոնյաների: Ահա գործոններ, վորոնք հիմք ունենալով տնտեսա-դասակարգային շահերը, նախասլատրաստեցին «Գորդյան հանգույցը»:

«Կովկասյան կապիտալիզմի զարգացումը և հայ կապիտալիզարգացում ե նշանակում, Կովկասյան կապիտալը հայ բուրժուական հասարակութեան առաջացման խթանն ե հանդիսանում»:

«Ազգի ներսում նացիոնալիզմը խրախճանքի պար ե բռնում՝ ծառայելով ժողովրդական մասսաների քնացման միջոց, իսկ տի-

րողներին համար վորպես ժողովրդական ավերածություններին ու սրածություններին գործիք:

Նացիոնալիզմը բուրժուական կարգերի արտադրությունն է: Նրա ճանապարհը արյան ու արտասուքի ճանապարհն է: Մենք ականատես ենք յեղել ազգերի և ազգային պետությունների խոշոր ընդհարումների, զենք ու դրահի շաչյունին միանում է մի այլ աղմուկ՝ ծխացող ու մխացող տների և շեների մնացորդները շիջուցանվում են մի «եժան» նյութով, դա իր արժեքը կորցրած մարդկային արյունն է, դա իր աշխատանքից ու ընտանիքից խլված քրտնաշան բանվորի կյանքի գինն է, վոր սրբագործվում է հանուն նացիոնալիզմի կամ ազգային տիրապետության, հոգուտ ազգի յերջանիկների կամ տիրող դասակարգի»:

«Բուրժուազիայի տիրապետության որով գասակարգային շահագործումը և ազգահալած քաղաքականությունը առաջ է տարվում նույն խաղի ուժով և այդ խաղն իր ձեռքում պահող ֆարաշավորի ոգնությամբ»:

«Իշխանյանները մի ժամանակ հարմարեցնում էին մարքսիզմը լիբերալիզմին, այսօր մեր ուսմունքը հեղափոխական մարքսիստ կոչվածներից վոմանք գերի յեն դարձնում մեշչանական, մանր-բուրժուական և նացիոնալիստական տարրերին»:

«Շնորհիվ Պորհրդային Հայաստանի ընդհանուր քաղաքականության, միջազգային խաղաղությունը հայ աշխատավորության համար միանգամայն սպահովված է, իսկ սա հայ կյանքի առաջիկա բարորության հիմքն է կազմում»:

«Մենք առաջարկում ենք հաշտվել ու խաղաղություն հաստատել հայ և թուրք ժողովուրդների միջև, մենք առաջարկում ենք ոգնել նոր թյուրքիային դեն գցելու յեվրոպական հափշտակիչների յաթաղանը, մենք առաջարկում ենք իրար ոգնել, վորպեսզի շուտով վոտքի յելնենք, ուժեղացնենք Արևելքը, ընդունակ դարձնենք նրան տնտեսական զարգացման ու կուլտուրական առաջընթացության: Յեթե այս ամենը կատարվի, այն ժամանակ ինքնըստինքյան «կլուծվեն» և սահմանային, տերրիտորյալ խնդիրները, առանց առաջնի չկա յերկրորդը:

Պորհրդային Հայաստանը բարեկամական կապ է հաստատում նոր թյուրքիայի հետ: Դրանով նա խաղաղացնում է իր յերկիրը, համերաշխության լեզու յե ստեղծում յերկու հարևան ժողովուրդների համար: Այդ գործելակերպը պահպանում է հայ

աշխատավորութեան ֆիզիքական գոյութիւնը, ապահովում եւ արեւելքի բարոր ապագան»:

«Հայաստանը մի յերկիր եր, ուր արմատացել եր բարքերի անկումը, կաշառակերութիւնը, գողութիւնը, վորոնք բուրժուական տիրապետութեան հետեւանք եյին, և պետք եր յեռանդուն ջանք թափել վերացնելու այդ թերութիւնները: Կոմունիստական տարրերն ամենայն թափով այդ աշխատանքն առաջ են տանում»:

Լուսավորութեան գործը թողած՝ միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղվել չենք կարող»:

«Մեր հաղթութիւնը կրթութիւնից, գիտութիւնից և դաստիարակութիւնից ե կախված»,

«Այո, մենք ասում ենք թե այս յերկիրը մերն ե, և չնայած վոր գտնվում ե դժնդակ պայմաններում, բայց նա դուրս կգա այդ դրութիւնից, վոչ կարեկցութիւն հայցելով, այլ աշխատավորութեան հուժկու բազուկներով: Դրութիւնը, այո, ծանր ե, բայց յերկիրը պետք ե հանել այդ վիճակից: Մենք սրի ու հրի միջոցով ձեռք ենք բերել ազատ ապրելու հնարավորութիւն: Մեր կետ նպատակն ե այժմ դուրս բերել աշխատավորութեանը ծանր վիճակից և տեր դարձնել իր իշխանութեանը: Մենք կատարել ենք աշխատավորութեան մեզ վրա դրած պարտականութիւնը, մեր կատարածն արդար գործ ե, կեցցի այդ արդար գործը»:

Յերկու տարի անցավ այն որից, յերբ լալկան, արյունոտ, պատառոտված, քաղցած և ցուրտ Հայաստանը քանդեց իրեն կաշկանդող ու թշվառացնող շղթաները: Վերջիններս կորան, սակայն ձեռք բերվեցին՝ խաղաղութիւնը, աշխատանքը, քաղցից ազատվելու և ապա յերջանկութեան յերաշխիքը: Դժվարութիւնների, լացի ու արյան և զարտուղի ճանապարհներով ձեռք բերվեց այդ ամենը: Դա մի եպոխտ եր: Նա անցավ ու գնաց, բայց և կարող ե վերադառնալ, յեթե միայն աշխատավորութիւնը պինդ չպահի իր ձեռքում այն «կապույտ թռչունը», վոր Խորհրդային իշխանութիւն ե կոչվում»:

«Առանց գյուղի վոչինչ չի կարելի անել մեր յերկրում, քանի վոր նա գերազանցապես գյուղացիական յերկիր ե»:

«Գյուղում լուսավորութիւն տարածողը պետք ե լինի գյուղ-

դական ուսուցիչը: Վարժապետների դարն անցավ, մեզ պետք են հեղափոխական, պրոլետարական ու մարդասեր ուսուցիչներ»:

---

## ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ

ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԴԱՂՍՏԱՆԻ, ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ,

Ձերմապես վողջունելով Կովկասի խորհրդային հանրապետու-  
թյունները, յես ինձ թույլ եմ տալիս հուսալ, վոր նրանց սերտ  
միությունը կստեղծի ազգային խաղաղության այնպիսի մի որի-  
նակ, վոր չի յեղել բուրժուազիայի որով և անհնարին է բուր-  
ժուական կարգերում:

Բայց վորքան էլ կարևոր է ազգային խաղա-  
ղությունը Կովկասի ազգությանց բանվորներին  
և գյուղացիներին միջև, էլ ավելի անհամեմատ կա-  
րեվոր է պահել և զարգացնել խորհրդային իշխա-  
նությունը, վորպես սոցիալիզմին անցնելու ճա-  
նապարհ: Այդ խնդիրը դժվար է, բայց միանգամայն իրագոր-  
ծելի: Դա հաջողակ լուծելու համար ամենից ավելի կարևոր է, վոր  
Անդրկովկասի կոմունիստները ըմբռնեն իրենց և իրենց  
հանրապետություններին յուրահատուկ դրություն-  
ներ, վոր տարբեր է ՌՍՖՍՀ դրությունից և պայ-  
մաններից, ըմբռնեն մեր տակտիկան չընդորինա-  
կելու անհրաժեշտությունը, այլ մտածված կեր-  
պով ձևափոխեն այն՝ տարբեր կոնկրետ պայման-  
ներին համապատասխան:

Խորհրդային հանրապետությունը Ռուսաստանում՝ քաղաքա-  
կան և զինական ոգնություն չունեցավ վոչ մի կողմից, նա ընդ-  
հակառակը, տարիներ կովեց Անտանտի ռազմական հարձակում-  
ների և նրա բլոկադի դեմ:

Կովկասի խորհրդային հանրապետությունները քաղաքական  
և փոքր չափով զինական աջակցություն են ստացել ՌՍՖՍՀ-ից:  
Սա հիմնական տարբերությունն է:

Յերկրորդ, առիթ չկա վախենալ Անտանտի հարձակումներից  
և նրա՝ վրաց, ադրբեջանական, հայկական, դադստանցի և լեռ-  
նական սպիտակ գվարդիականներին զինական աջակցություն  
ցույց տալուց: Անտանտը իր «ձեռները այրեց» Ռուսաստանի

վրա և դա նրան կհարկադրի յերևի, մի առժամանակ ավելի ըզ-  
գույշ լինել:

Յերրորդ. Կովկասյան հանրապետությունները ավելի գյու-  
ղացիական յերկրներ են, քան Ռուսաստանը:

Չորրորդ. Ռուսաստանը տնտեսապես կար և զգալի չափով  
մնում է կտրված առաջավոր կապիտալիստական յերկրներից, Կով-  
կասը կարող է «կենակցություն» և ապրանքափոխանակություն  
ստեղծել կապիտալիստական Արևմուտքի հետ ավելի հեշտ և արագ:

Սա ամբողջ տարբերությունը չէ: Բայց մատնանշված տար-  
բերություններն են բավական են այլ տակտիկայի անհրաժեշտու-  
թյունը ըմբռնելու:

Ավելի մեղմություն, զգուշություն, դիջոդա-  
կանություն մանր բուրժուազիայի, ինտելիգեն-  
ցիայի և առանցնապես գյուղացիության վերա-  
բերմամբ: Ամեն կերպ, յեռանդով, շտապ տնտեսա-  
պես ոգտագործել կապիտալիստական Արևմուտքը  
կոնցեսիաների և նրա հետ ապրանքափոխանակու-  
թյուն կատարելու քաղաքականության մեջ: Նավթ,  
մարգանեց, քարածուխ (Տկվիբուլի հանքերը), պղինձ—սա յե,  
տակավին վոչ լրիվ թիվը, հանքային ահագին հարստություն-  
ների: Լիակատար հնարավորություն կա արտասահմանի հետ լայ-  
նորեն կոնցեսիաների քաղաքականություն և ապրանքափոխա-  
նակություն ծավալելու:

Սա պետք է անել ընդարձակ, ամուր, կարող, շրջահա-  
յաց կերպով, ոգտագործելով դա՛ ամեն կերպ բանվորների և գյու-  
ղացիների դրությունը բարվոքելու համար և ինտելիգենցիային  
տնտեսական շինարարության մասնակից անելու համար: Ոգտա-  
գործելով Իտալիայի, Ամերիկայի և այլ յերկրների հետ ունենա-  
լիք ապրանքափոխությունը, ամեն կերպ զարգացնել հարուստ  
յերկրի արտադրական ուժերը, սպիտակ ածուխը, վոռոգումը:  
Առանձնապես կարևոր է վոռոգումը՝ հողագործու-  
թյունը և անասնապահությունը ամեն կերպ բարձ-  
րացնելու:

Ավելի դանդաղ, ավելի զգուշ, ավելի սիստե-  
մատիկ անցում դեպի սոցիալիզմը — ահա թե ինչ  
հնարավոր և անհրաժեշտ է Կովկասի հանրապե-  
տությունների համար՝ ՌՍՖՍՀ-ի պայմաններից  
տարբեր: Ահա թե ինչ պետք է հասկանալ և կարողանալ իրա-  
գործել՝ մեր տակտիկայից տարբերվելով:

Մենք բանում ենք առաջին ճեղքը համաշխարհային կա-

պիտալիզմի մեջ: Ճեղքը բացված է: Մենք մեզ պաշտպանեցինք կատաղի, գերբնական, ծանր և դժվարին, ցավագին պատերազմում՝ ընդդեմ սպիտակների, եսերների, մենշևիկների, վոր աջակցություն էյին գտնում ամբողջ Անտանտի, նրա բլոկադի կողմից և վայելում էյին նրա զինական ոգնությունը:

Իսկ, Կովկասի ընկեր կոմունիստներ, կարիք չունեք ճեղք բանալու. պետք է մեծ զգուշությամբ և սխտեմատիկորեն ստեղծեք նորը, ոգտագործելով 1921 թ., ձեզ համար ձեռնտու, միջազգային կացությունը: Թե Յեվրոպան, թե ամբողջ աշխարհը 1921 թ., արդեն այն չեն, ինչ էյին 1917 և 1919 թվերին:

Չընդորինակել մեր տակտիկան, այլ ինքնուրույնաբար խորհել նրա առանձնահատկույթյան պատճառները, պայմանները և հետևանքները. կիրառել ձեզ մոտ վոչ թե տառը, այլ վոգիին, իմաստը և 1917—1921 թ. թ. փորձերի դասը: Տնտեսսորեն և անմիջապես հենվել կապիտալիստական արտասահմանի հետ ապրանքափոխանակություն հաստատելուն. ժլատություն չանել. թող տասնյակ միլիոն արժեքավոր հանքային մթերքներ ընկնեն նրա ձեռքը:

Անմիջապես աշխատել՝ բարելավել գյուղացիների դրությունը և սկսել ելք տրոֆիկացիայի և վոռոգման խոշոր աշխատանքներ: Ամենից ավելի անհրաժեշտ է վոռոգում, վորը ամենից շուտ կվերստեղծի, կվերածնի յերկիրը, կթաղի անցյալը, կամրապնդի սոցիալիզմին անցնելու ճանապարհը:

Ներողություն էմ խնդրում այս նամակը անփուլթ գրելուս համար, վորը յես ստիպված էյի արագ գրել, վոր ուղարկեմ ընկ. Մյասնիկյանի միջոցով: Կրկին լավագույն վողջույններ և ցանկություններ Կովկասի խորհրդային հանրապետությունների բանվորներին և գյուղացիներին:

Ն. ԼԵՆԻՆ

Մոսկվա, 14 ապրիլի, 1921 թվին.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.

(Մինչև 1917 թ. մարտի հեղափոխությունը, վոչ լրիվ ցանկ)

1. «Մեր իրականությունից» — «Բանվոր», Բագու, 1907 թ. № 1:
2. «Ռամկավար հանրապետություն» — «Մայիսի մեկը», անլեզու ժողովածու, Բագու 1907 թ.:
3. «Ինչպես են գրվում բեցենզիաները մեզանում» — «Մշակ», 1910 թ. № 26:
4. «Միքայել Նալբանդյան» — «Հորիզոն», 1910, № № 246, 247:
5. «Աշխատանքի տոնը» — «Կոչ», Բագու, 1911 թ. № 3:
6. «Հասարակական դասակարգի մասին» — «Նոր կյանք», Բագու, 1911 թ., № 1, 2, 1912. № 3, 4:
7. «Բարեգործություն և նրա սպասավորները» — «Նոր կյանք», 1912 թ. № 3, 4:
8. «Արդի տնտեսական կյանքը» — ա) Կապիտալիզմը Ռուսաստանում, բ) ռուսական համայնքը, գ) խոշոր և մանր տնտեսության հարցը գյուղատնտեսության մեջ — «Մեր Ուղին», ժողովածու, Բագու, 1912 թ.:
9. «Հ. Հովհաննիսյանի և Ա. Ծատուրյանի բանաստեղծությունների հասարակական արժեքը» — «Գարուն», ժողովածու, Մոսկվա, 1912 թ. գիրք III:
10. «Ազգային հարցի լուծման մասին» — «Մշակ», 1913 թ. № № 252, 256:
11. «Յերկու կուլտուրական տոն» — «Մշակ», 1913 թ. № 263:
12. «Ազգային կռիվը Նոր Նախիջևանում» — «Մշակ», 1913 թ. № 274:
13. «Ռուս լիբերալը հայկական հարցի մասին» — «Մշակ», 1913 թ. № 284:
14. «Հայկական հարցի գործնականը» — «Մշակ», 1914 թ. № 3:
15. «Հայկական ռեֆորմների նախագիծը» — «Մշակ», 1914 թ. № 28:
- 16 «Արթնացումը» — «Մշակ», 1914 թ. № 38:
- 17 «Հասարակական հարցը» — «Մշակ», 1914 թ. № 54:
18. «Խոշոր հայ գրողի հիշատակին» — «Մշակ» 1914 թ. № 71.

(Միք. Նալբանդյանի մասին):

19. «Գաղութային հարցը»—«Մշակ», 1914 թ. № 124:

20. «Ազգային հարցի մոտիկ անցյալից Ռուսաստանում»—  
«Մշակ», 1914 թ. № 134.

(Մինչև 1925 թ. վոչ լրիվ ցանկ)

1921 թվին:

1. Ղարսի խաղաղության կոնֆերանսը, սեպ. 27:
2. Ս. Շահումյանի հիշատակին, հոկտ. 2:
3. Ընկեր կարմիր զինվորներ, հոկտ. 6:
4. Կուսակցության մաքրում, հոկ. 13:
5. Շարաթորյակների կազմակերպումը, հոկ. 20:
6. Բանվորագյուղացիական կոնֆերենցիան, նոյ. 2, № 211:
7. Կովկասյան հանրապետությունների ֆեդերացիան, նոյ. 13 № 221:
8. Ընկ. Մյասնիկյանի զեկուցումը Անդրկովկասյան ֆեդերացիայի և ընթացիկ մոմենտի մասին, նոյեմ. 15:
9. Հին և նոր Հայաստանը, նոյ. 29:
10. Հայաստանի կարմիր բանակը, նոյ. 29:

1922 թվին.

1. Մասնավոր ձեռներեցություն, հունվ. 18:
2. Ընկ. Մյասնիկյանի զեկուցումը ՀԿԿ առաջին համագումարում, հունվ. 31:
3. Ընկ. Մյասնիկյանի ճառը Հայաստանի խոր. Ա. համագումարում, փետր. 2:
4. Ընկ. Մյասնիկյանի զեկուցումը Անդրկովկ. կուս. կազմ. համագ., մարտ. 11:
5. Քաղաքացիական պատերազմը և կարմիր Բանակը, մարտի 15:
6. Ընկ. Մյասնիկյանի զեկուցումը Յեր. պատգ. խորհրդում, մարտի 30:
7. Դաշնակցության փաստաթղթերից—ապրիլի 7:
8. Ալ. Ռուբենու հիշատակին, ապրիլի 9:
9. Ընկ. Մյասնիկյանի ճառը արեվմտահայ աշխատավորության անդրանիկ համագումարում, ապրիլի 11:
10. Կոմունիստների աշխատանքը հայաստանում, ապրիլի 12:
11. Ի՞նչ պետք է լինի Հայկոոպը, ապրիլի 13:
12. Ինչ անուն տալ, մայիսի 3:
13. Վորոնք են բուն դավադիրները, մայիսի 20:

14. Վորն և մեր ճանապարհը, մայիսի 21:

15. Անդրկովկասի ընդհանուր դրամանիշի մասին, հունիսի 25:

1923 թվին.

16. Ընկ. Մյասնիկյանի զեկուցումը ընթացիկ խնդիրների մասին, սեպտեմբերի 9:

17. Խորհրդային միության ներքին ու արտաքին դրությունը և մեր խնդիրները—ճառ արտասանած Յերեվանում 1924 թ. սեպտեմբերին:

18. «Մեր գյուղը», հոդված 24 թ. նոյեմբերի 29:

19. «Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների սոցիալական արժեքը»:

20. «Կուսակցությունները գաղութահայության մեջ», 1924 թ:

21. „Об эсерах“.

23. „За партию“.

23. „Беспартийная конференция“.



СТАРАЯ АУДИТОРИЯ (№ 2)  
**ПОЛИТЕХНИЧЕСКОГО МУЗЕЯ**  
(Китайский проезд).

---

В Пятницу, 28-го Марта,

**А. МЯСНИКОВ**

ПРОЧТЕТ ЛЕКЦИЮ НА ТЕМУ

Общественное значение поэзии О. Ованисяна,  
А. Цатуряна и О. Туманяна.

===== СОДЕРЖАНИЕ ЛЕКЦИИ: =====

1) 80-е годы прошлого столетия и армянское общество—Экономический быт и общественная жизнь армянского общества 80-ых г.г. характеристика интеллигенции: Г. Арцруни. Раффи и Р. Патканян. Эпоха подъема сменяется периодом упадка. Новая армянская поэзия; ее представители: О. Ованисян, А. Цатурян и О. Туманян.

2) Характерные черты новой поэзии—учители и ученики. Боевой темперамент учителей и пассивность учеников. Пессимизм в поэзии Ованисяна, Цатуряна и Туманяна. Гражданские мотивы.

3). Город и деревня в произведениях Ованисяна и Туманяна. Элементы родной поэзии.

4) Цатурян и Ованисян. Национальная идея. Мещанство в армянской поэзии. Мелкий люд перед судом Цатуряна и Ованисяна. Новое время и новые веяния.

5) Заключение.

После лекции прения, в которых примут участие  
**Ю. А. Веселовский, Н. Б. Кусикян, С. Г. Мамиконян,**  
**Ширванзанде** и другие

Начало в 8 час. веч.

Билеты в Политехнич. музее у швейцара, а в день лекции в кассе.

---

Печ. разр. 7 Марта 1914 г. За Моск. Градонач. Пом. его ЗАККИТ.

Типография Е. Аветикова. Москва, Рождественский бульвар, д. № 10

# Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԸ

ԿԸ ԿԱՐԴԱ

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՅԵՎ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՆՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ 1) Անցյալ դարերի շրջանի 80-ական թվականները: 80-ական թվականների հայ հասարակութայն տնտեսական կյանքը և հասարակական կյանքը: Մտավորականութայն խարակտերիստիկան՝ Գր. Արծրունի, Բաֆֆի և Ռ. Պատկանյան: Վերելքի եպոխային հետևում ե անկման շրջանը: Նոր հայկական պոեզիան: Նրա ներկայացուցիչները՝ Հովհ. Հովհաննիսյան, Ա. Ծատուրյան և Հովհ. Թումանյան:

2) Նոր պոեզիայի բնորոշ հատկությունները՝ ուսուցիչներ և աշակերտներ: Ուսուցիչների մարտական տեմպերամենտը և հետնորդների կրավորականությունը: Հոստեսությունը Հովհաննիսյանի, Ծատուրյանի և Թումանյանի պոեզիայի մեջ: Քաղաքացիական մոտիվներ:

3) Քաղաքն և գյուղը Հովհաննիսյանի և Թումանյանի յերկերում: Հայրենի պոեզիայի տարրերը:

4) Ծատուրյան և Հովհաննիսյան: Ազգային գաղափարը: Քաղքենիությունը հայկական պոեզիայի մեջ: Հասարակ ժողովուրդը Ծատուրյանի և Հովհաննիսյանի դատաստանի առաջ: Նոր ժամանակ և նոր հովեր:

5) Վերջաբան:

Դասախոսությունից հետո կ'կայանան վիճաբանություններ, վորոնց կմասնակցեն՝ Յու. Վեսելովսկի, Կ. Բ. Կուսիկյան, Ս. Գ. Մամիկոնյան, Շիրվանզադե և ուրիշներ: ՍԿԻԶԻԸ ԺԱՄԻ Տ ՅԵՐ.

Տոմսակները Պոլիտեխնիքական Մուզեյում, իսկ դասախոսության որը կասսայում:

Թուլյատր. տպագր. 1914 թ. մարտի 7. Մոսկվա. Քաղաքապ. ոգնական՝ ՋԱԿԻՏ. Տպարան Յե. Ավետիկովի. Մոսկվա. Բաժնետիրական ընկերություն. № 10.

ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ՊԵՏԲ Ե ԼԻՆԻ

Էջ 76.

1921 թվին

1921 թվին. «Սորհրդային  
Հայաստան»:

Էջ 77.

ցանկի վերջում

Արտատպված «Սորհրդա-  
յին Հայաստանից»:

Էջ 78.

7 марта 1924 г.

7 марта 1914 г.

Էջ 73.

Ծկվիբուլի

Տկվիբուլի

ԳԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



220029639

2m

ԳԻՆԸ 45 ԿՈՊԵԿ

29639

ԵՅՔ. ՆՑ	1761
ՍԵՐ. Ա	2 p. 4

